



J. H. Thompson



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ПРАВЛЕНИЕ ОБЩЕСТВА «ЗНАНИЕ»

МИНАС САРГСЯН

И.К.
АЙВАЗОВСКИЙ



ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

«ԳԻՏԵԼԻՔ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

A $\frac{\pi}{41322}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

Խմբագրութեամբ Գ. Ա. Դյուրշանի

Աշխարհահռչակ ծովանավարիչ Հովհաննես Ալվազովսկին խոշոր տեղ է գրավում հայ և ռուս նկարչության մեջ: Նրա բաղմամբով ու բարձրարվեստ ստեղծագործությունները, երկարատև՝ ավելի քան 60-ամյա, բեղմնավոր գործունեությունը եղել են եղբայրական երկու ժողովուրդների գեղարվեստական մշակույթի փոխադարձ հարստացման ու սերտ կապերի ցայտուն արտահայտություններից մեկը XIX դարի կերպարվեստի պատմության մեջ:

Հովհաննես Ալվազովսկին ծնվել է 1817 թ. հուլիսի 17-ին Ղրիմի Թեոդոսիա հայաբնակ քաղաքում, հայ բնտանիքում: Նրա հայրը՝ Կոնստանդինը, շատ երկրճեք շրջազայած մարդ էր և գիտեր բազմաթիվ լեզուներ: Իր եղբայրների հետ ունեցած բնտանեկան ներքին անհամաձայնության պատճառով նա հեռանում է Գալիցիայից (Լեհաստան), ուր բնակություն էին հաստատել Արևմտյան Հայաստանից XVII—XVIII դարերում գաղթած բաղմահազար հայերի հետ նաև նրա Ալվազ (կամ Հալվազ) կոչված պապերը և տեղափոխվում Մոլդավիա, ապա Բուքովինիա, որտեղից էլ մեկնում է Թեոդոսիա (Ղրիմ), ուր և մշտական բնակություն է հաստատում: Այստեղ էլ սնանկացած առևտրականի բնտանիքում, Հռիփսիմե մորից ծնվում է Հովհաննեսը, երրորդ որդին Գրիգորից և Գաբրիելից հետո, որոնք, ինչպես և երկու քույրերը, մկրտվում են հայոց եկեղեցում՝ Գրիգորյուսավորչական դավանանքի կանոններով:


Հովհ. Ալվազովսկին սկզբնական կրթությունն ստանում է Թեոդոսիայի հայոց ծխական դպրոցում, այնուհետև՝ Սիմֆերոպոլի ռուսական գիմնազիայում, ուր հանդես բերելով նկարչական բարձր ընդունակություններ տեղափոխվում է Պետերբուրգ և 1833 թվականից



Նկարչի մոր՝ Հովհաննիսի դիմանկարը. 1849

սովորում գեղարվեստի ակադեմիայի բնանկարչության դասարանում, պրոֆ. Մ. Ն. Վորոբյովի մոտ:

Այստեղ նա արագ առաջադիմում է: Ուսանելու տարիներին, ակադեմիական ծրագրերից դուրս նա նկարում է «Մովաժոցը Պետերբուրգի շրջակայքում», «Մովի վրայի օդը» էտյուդը, «Նավերը Կրոնշտադտում», «Մովափը գիշեր ժամանակ» և վերջապես «Անդորր» (1837), որի համար նա ստանում է ոսկե մեդալ: Այդ պատկերներով նա 1830-ական թվականներին մասնակցում է ռուս նկարիչների պետերբուրգյան ցուցահանդեսներին և արժանանում ակադեմիայի պրոֆեսորների խրախուսանքներին ու մամուլի բարձր գնահատությանը: «Մովային տեսարանների պատկերները՝ բնանկարչության» այդ տեսակը, մեզ մոտ դեռևս փոքրաթիվ են, — գրում է 1836 թ. Պետերբուրգում լույս տեսնող «Խուդոժեստվեննայա գազետա» թերթը



Նկարչի հոր՝ Կոնստանդինի դիմանկարը

և նշելով պրոֆեսորների հետ ցուցադրվող ուսանող Այվազովսկու ստեղծագործությունները, ավելացնում է, որ նրա «Երկու պատկերները, որոնք ներկայացնում են դեպի Կրոնշտադտ զնացող նավ և հուլանդական մի առագաստանավ բաց ծովում, խոսում են առանց կողմնակի ակնարկների, որ տաղանդը նկարչին կտանի հեռու: Բնականի ուսումնասիրությունը կբացի մնացած գանձերը, որոնց մասին այժմ տաղանդը միայն ենթադրվում է... Այվազովսկու ստեղծագործությունները այժմ հիացնում, աչքի են ընկնում...»:

Շնորհիվ իր արտակարգ ընդունակությունների և աշխատասիրության, Հովհ. Այվազովսկին ուսման 6 տարվա դասընթացը յուրացնում է 4 տարում և 2 տարի շուտ՝ 1837 թ. ավարտում է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ոսկե մեդալով:

Պրոֆեսորական խորհրդի որոշմամբ 20-ամյա նկարիչը 2 տարով գործուղվում է Ղրիմ ինքնուրույն աշխատանքի: Այստեղ նա մտերիկից ուսումնասիրում է ծովային բնությունը, մասնակցում ուսուցողականների զորաշարժերին և նկարում ծովափնյա տեսարաններ ու կանաչավետ բնության պատկերներ, ոտնցից մի քանիսը («Յալթա», «Ծովափը», «Լուսնյակ գիշեր») 1839 և 1840 թթ. ցուցադրվում են Պետերբուրգի նկարիչների ցուցահանդեսներում:

Ձեռք բերելով ազատ և ինքնուրույն աշխատանքի որոշ փորձ, Այվազովսկին, ակադեմիայից ստացած իր ամսական թոշակի մի մասը հատկացնելով ծնողներին, 1840 թ. հունիսին 6 տարի ժամանակով, ակադեմիայի հաշվին մեկնում է Իտալիա կատարելագործվելու: Նա լինում է Իտալիայի և Արեմտյան Եվրոպայի մյուս երկրների համարյա բոլոր գլխավոր և ծովափնյա բաղադրներում, այցելում թանգարանները, տեսարժան վայրերը, դիտում պատմական ու գեղարվեստական հուշարձանները, ուսումնասիրում անտիկ շրջանի, վերածննդի հանճարեղ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունները, հանդիպում և զրուցում է իտալացի, ֆրանսիացի, հոլանդացի, իսպանացի, անգլիացի, գերմանացի, ռուս և հայ մշակույթի շատ գործիչների հետ, ամենուր և անընդհատ հարստացնելով իր գիտելիքները: «Ես տեսա Ռաֆայելի և Միքել-Անջելոյի ստեղծագործությունները,—գրում է նա իր բարեկամներից մեկին Հոտմից 1842 թ.—տեսա Կոլդեյը, Պետրոսի և Պողոսի եկեղեցին և այլն, և այլն: Նայելով հանճարների ստեղծագործություններին՝ այդ հսկաներին, զգում ես քո ոչնչությունը: Այստեղ մի օրը ամբողջ տարի արժե: Ես մեղվի պես ծաղկանոցից մեղր եմ ծծում»¹:

Համաշխարհային արվեստի ծաղկանոցներում մեղվի ժրաջանությամբ աշխատող երիտասարդ Այվազովսկին կատարելագործում է իր մասնագիտական ունակությունները և 1840—1841 թթ. ստեղծում է ծովանկարներ, որոնք տեղի արվեստասեր հասարակության մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում: Նրա նկարները վաճառվում են բարձր գներով և արագորեն:

1842 թ. Հոտմում բացած նրա անհատական ցուցահանդեսը գառնում է խոշոր երևույթ Իտալիայի մայրաքաղաքում: Թերթերը մեծ գովեստով են խոսում նրա մասին: Առանձնապես հիացմունք են

¹ «Русская старина», 1878, т. 22, стр. 441—442.

առաջացնում «Փոթորիկ» և «Քառս» պատկերները, որոնք հետաքրքրում են նույնիսկ Հռոմի պապին և երիտասարդ նկարչին հրավիրելով իր մոտ, նրան նվիրում է ոսկե մեդալ՝ «Քառս» պատկերի համար:

Այդ ժամանակ Հռոմում գտնվող ռուս մեծ գրող Ն. Գոգոլը մի խնջույքում դառնալով նկարչին բացականչում է. «Վանյա, փոքրիկ մարդ, Նևայի ափերից եկար դու Հռոմ և իսկույն «Քառս» ստեղծեցիր Վատիկանում...»: Անգլիացի մեծահամբավ ծովանկարիչ Ջ. Տյորնսբրը բարձր գնահատելով Այվադովսկու արվեստը, գրում և նվիրում է նրան մի բանաստեղծություն, որի մեջ երիտասարդ նկարչին համարում է հանճար՝ «Եզդ ոգեշնչում է հանճարը», գրում է նա: Հովհ. Այվադովսկու ծովանկարները իտալիայում ջերմ ընդունելություն են գտնում: Վենետիկում բացած ցուցահանդեսը տեսնելու համար, ինչպես գրում են իտալական թերթերը, առավոտից մինչև երեկո երկար հերթեր են գոյանում: «Վենետիկո մեջ հանդիսացած պատկերները հարկ եղավ որ տերության զինվորներով պաշտպանէ, այնչափ խուռն բազմություն տեսնելու կվազեին» վկայում է հայկական ամսագիրը¹: իտալացի և այստեղ գտնվող օտարերկրյա շատ նկարիչներ, հրապուրված Այվադովսկու ստեղծագործություններով ու նրա ինքնօրինակ ոճով, սկսում են նկարել ծովանկարներ նրա նմանողությամբ: «a la Այվադովսկի» արտահայտությունը դառնում է տիրապետող այդ ժամանակ:

Հովհ. Այվադովսկու համբավն արագորեն տարածվում է Եվրոպայում: Նրա ստեղծագործություններն ու ցուցահանդեսները ամենուր ջերմությամբ են ընդունվում: Այդ ժամանակ էլ նա ընտրվում է իտալիայի, Ֆրանսիայի և Նիդերլանդիայի զեղարվեստի ակադեմիաների իսկական անդամ: 1844 թ. ռուսական զեղարվեստի ակադեմիան ևս, ռուս առաջավոր արվեստագետների պահանջով, նրան ընտրում է ակադեմիկոս: Այսպիսով, 27 տարեկան հասակում Այվադովսկին, որպես առաջնակարգ ծովանկարիչ, դառնում է չորս երկրների զեղարվեստի ակադեմիաների իսկական անդամ, ձեռք բերելով եվրոպական համընդհանուր ճանաչում: «Ուրախալի է գիտակցել այն, որ անպտուղ չեն անցել ինձ համար երիտասարդության այն երջանիկ տարիները, որ ևս, իմ ուժերի և ընդունակությունների սահմաններում արդարացրի իմ նկատմամբ ցուցաբերած

¹ «Մասնաց աղավնի», 1857, էջ 277:

այն բարերարութիւնը և հուսերը, որոնք ինձ վրա էին գրել իմ հայ-
րենակիցները, — գրում է նա իր ինքնակենսագրականում, ավելաց-
նելով, — Հոռմը, Նեապոլը, Վենետիկը, Փարիզը, Լոնդոնը, Ամստեր-
դամը արժանացրին ինձ ամենաջերմ խրախուսանքի և ներքուստ ևս
չեմ կարող չհպարտանալ օտար երկրներում իմ ունեցած հաջողու-
թիւններից, կանխազգալով համակրական ընդունելութիւն հայ-
րենիքում»¹:


1844 թ. աշնանը, ժամկետից 2 տարի շուտ, Հովհ. Այվազովսկին
վերադառնում է հայրենիք և ամբողջապես նվիրվում ստեղծագոր-
ծության: Այդ ժամանակ ուսական կայսրը պատվիրում է նրան
Մերձբալթյան ծովային ամրոցների (Կրոնշտադտ, Ռևել, Սվեաբորգ)
և Սեծովյան նավահանգիստների պատկերներ, լավ վարձատրելով
երիտասարդ նկարչին: Նույն տարում՝ 1844 թ. սեպտեմբերի 12-ին
Ռուսական ռազմածովային մինիստրութիւնը որոշում է կալացնում
Հովհ. Այվազովսկուն ճանաչել ռազմածովային նավատորմի գլխա-
վոր ծովային շտաբում որպէս շտաբային նկարիչ ծովային՝ մինիստ-
րության մոնզիր կրելու իրավունքով, այն հաշվով, որ այդ կոչումը
համարվի պատվավոր:

Պետերբուրգում մի քանի պատկեր նկարելուց հետո Այվազով-
սկին մեկնում է Ղրիմ, ուր և հաստատում է մշտական բնակութիւն:
Այստեղ՝ Թեոդոսիայում, 1846 թ. նա իր նախագծով կառուցում է
երկհարկանի սեփական մենատուն և արվեստանոց, ուր աշխատում
է օրն ի բուն, շրջապատված իր հարազատներով և հայրենակիցնե-
րով:

Սակայն հեռավոր հարավում մշտական բնակութիւն հաստա-
տելը դուր չի գալիս ուսաց կայսեր Նիկողային, որը ցանկանում էր
նրան դարձնել պալատական նկարիչ և մտցնել իր շքախմբի մեջ: Նա
իր պալատականների միջոցով փորձում էր համոզել Այվազովսկուն,
որ նա մշտապես ապրի Պետերբուրգում՝ արքունիքին մոտ, բաց
տեսնելով, որ այդ խորհուրդը չի ազդում նրա վրա, ժամանակակից-
ների վկայութեամբ, Նիկողայը թափահարելով թեւերը, ասում է. «Ինչ-
քան էլ գալլին կերակրես, այնուամենայնիվ, նա միշտ գեպի անտառ
է նայում»:

Այդ ժամանակվանից սկսած Հովհ. Այվազովսկին մշտապես
տարվա մեծ մասը՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն, ապրում և

¹ «Русская старина», 1878, т. 22, стр. 427.




Բնօրսիւ. 1865

ստեղծագործում է Թեոդոսիայում, իսկ ձմռան ամիսներին անց է կացնում Պետերբուրգում՝ մասնակցելով ռուս նկարիչների ցուցահանդեսներին:

Իր կյանքի և գործունեության ընթացքում Հովհ. Այվազովսկին շատ է ճանապարհորդում: 1845 թ. նա մասնակցում է ռուս ծովակալ Ֆ. Լիտկեի էքսպեդիցիային, նավարկելով Թուրքիայի արևմտյան ափերով, շրջագայում Փոքր Ասիայի և Միջերկրական ծովի մյուս ափերը: Նա լինում է Կոստանդնուպոլսում, ալեքսանդրիայում, Պատմոս, Սամոս, Լեմնոս, Ռոդոս, Լեսբոս կղզիները, դիտում հին Տրոյայի ավերակները և Սինոպը: Այդ ճանապարհորդությունը նրան տալիս է էտյուդների և էսքիզների առատ նյութ, որոնք մի ալբոմում ամփոփված այժմ պահվում են Մոսկվայի պետական կենտրոնական գրական արխիվում: Հետաքրքրական է նկատել, որ այդ ալբոմի նկարների տակ Այվազովսկին ստորագրել է «Այվազ էֆենդի»:

Այնուհետև նա բազմիցս ճանապարհորդում է եվրոպական երկրներում և ամեն տեղ, ուր լինում է նա՝ Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում, Կոստանդնուպոլսում, Ամստերդամում, Նիցցայում, Հոռմում, Վենետիկում, Նեապոլում, Բուխարեստում, Ռիգայում, Զենովայում, Ֆրանկֆուրտում, Վիեննայում, Վարշավայում կազմակերպում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսներ: 1868 թ. նա լինում է Անդրկովկասում, ուր Թիֆլիսում բացում է 12 պատկերներ ներկայացնող ցուցահանդես: 1869 թ. նա մասնակցում է Սուեզի ջրանցքի բացմանը, իսկ 1893 թ. մեկ ամսով մեկնում է Ամերիկա, ուր Նյու-Յորքում, Չիկագոյում և Սան-Ֆրանցիսկոյում բացում է ցուցահանդեսներ: Այդ ճանապարհորդությունների ընթացքում՝ նավերի մեջ, հյուրանոցներում կամ բարեկամների մոտ, ուր որ իջևանում է, Այվազովսկին անընդհատ նկարում և ստեղծում է նոր պատկերներ, որոնք պարբերաբար ցուցադրելով իր այցելած երկրներում, նվաճում է աշխարհի բոլոր ժողովուրդների սերն ու հիացմունք:

Իր երկարատև, ավելի քան 60 տարվա անընդմեջ ու բեղմնավոր գործունեության ընթացքում Հովհ. Այվազովսկին ստեղծում է շուրջ 6000 պատկեր, որոնց մեծագույն մասը ծովանկարներ են: Հովհաննես Այվազովսկին ծովը նկարել է օրվա տարբեր պահերին և տարբեր վիճակում: Ամենից ավելի նա պատկերել է ծովը փոթորիկի, ալեկոծման ժամերին: Հանրահայտ է նրա «Իններորդ ալիք» (1850) պատկերը, որը ներկայացնում է այլևս ծովը վաղ առավոտ-



Առաքատանակ. 1845, սեպտեմբեր

յան: Շատ բան չի նկարված աշատեղ՝ ընդամենը երեք-չորս ալիք, սակայն նրանցից մեկը՝ «իննեբորդը», պատկերված է այնպիսի ուժով և այնքան մեծ ու շարժման հսկայական թափով, որ հենց միայն նրանով արդեն զգացվում է փոթորկոտ ծովի ահնդությունն ու մոտալուտ վտանգը: Արևի ոսկեղօծ առաջին ճառագայթներից լուսավորված իննեբորդ ալիքը հզոր ուժով բարձրացել է մյուսներից վեր և թվում է, թե ահա ուր որ է կփլչի այն դժբախտ մարդկանց վրա, որոնք կառչել են խորտակված նավի ջարդված կայմի բեկորից: Նրանց կործանման վտանգը աչքի առաջ է: Սակայն, չնայած ողբերգական դրուժյանը, այդ խիզախ մարդիկ չեն կորցրել իրենց փրկության հույսը, նրանք նույնիսկ համակված են իրար օգնելու ոգով և իրոք, ինչպես նկարել է Այվազովսկին, օգնում են միմյանց: Դրանցից մեկը արդեն կախվել է գլխավայր դեպի ծովը և կիսով չափ ընկղմվել ջրի մեջ, մյուսը՝ ինքն էլ վտանգի մեջ, բռնել է նրան փրկելու համար: Մի ուրիշ դժբախտ ձեռքը և հայացքը դեպի լուսաշող հորիզոնն ուղղած փրկություն է աղերսում:

Չնայած կործանման մոտալուտ վտանգին, որն այնքան պարզորոշ պատկերված է աչքի առաջ, դիտողը, այնուամենայնիվ, ներքին ինչ որ մղումով, մտածում է, որ նրանք կփրկվեն: Այվազովսկին կարողացել է ամենաահեղ վտանգի պահին հանճարեղ կերպով տալ նաև փրկության հույսի զգացումը, որը համակում է դիտողին: Այդ է հաստատում գիշերային մռայլ խավարում ծովի կատաղի ջրերի վրա հորիզոնից առկայծող արևի ջերմ ճառագայթների գծած լուսափայլ ճանապարհը, դեպի որը ուղղված են վտանգի ենթակա մարդկանց հայացքները և ջարդված կայմի շարժման ուղղությունը:

Մովային տարերքի ահավոր պահին, կործանման վտանգի առաջ կանգնած մարդկանց կողմից միմյանց օգնության ձեռք մեկնելու և հորիզոնում երևացող արևի ջերմաշունչ ճառագայթները փրկության հույս են ներշնչում: Այստեղ իրար են հակադրված բնության ահեղ տարերքը և կյանքի համար մարդկանց համառ, քաջարի պայքարը: Այդ կատաղի և ողբերգական պայքարում, ինչպես տեսնում ենք այս պատկերում, մարդիկ հանդես են գալիս որպես իսկական հերոսներ, որոնք լարված, մեծագույն ուժերով դիմադրում են կործանմանը: Նկարիչն այստեղ արտահայտել է մարդկային հոգու վեհ հույսերը:




Ինքնուրույն աշխատանք. 1850

Ահարկու վտանգի պահին մարդկանց դրսևորած հոգու վեհությունը՝ միմյանց օգնելու հումանիստական գաղափարը, որն իր արտացոլումն է գտել դրանից առաջ ստեղծված Կ. Բրյուսովի «Պոմպեի վերջին օրերը» մեծակտավ պատկերի մեջ (1834), արտահայտում էր ժամանակի առաջադիմական հայացքները: Հովհ. Ալվազովսկին լինելով նույն շրջանի և նույն միջավայրի արվեստագետ, բնականաբար արտացոլել է այստեղ իր ժամանակի առաջավոր մարդասիրական գաղափարներ:

«Իններորդ ալիքը» ստեղծագործության մեջ ծովի ալեկոծման տեսարանը, ինչպես և փոթորկալից կամ խռովահույզ բնության այլ պատկերների մեջ, Ալվազովսկին չի արտահայտում անվերապահորեն կործանման կամ մոտալուտ մահվան գաղափարը, այլ վերարտադրում է ծովի այդ տարերքը որոշ թեթևությամբ՝ այն հազվագեղ ու գեղեցիկ տեսարանները, որոնց մեջ ապրում և իր կամքն է կոփում մարդը: Այստեղ նկատվող որոշ էֆեկտայնությունը, որն արտահայտվում է չափազանց ջերմ, դեղնանարնջավուն կոլորիտի մեջ, զգալիորեն նպաստում է պատկերի խիստ դրամատիկ բովանդակության մեղմացմանը: Նկարում արևի լույսը, որ թափանցել է օվկիանոսի ջրերի մեջ և ջերմացրել է հորիզոնը, միաժամանակ ուժեղացրել է պատկերի ընդհանուր, լավատեսական ոգին: Փոթորկուած ծովի վրա բացվող վաղորդյան գունագեղությունը Ալվազովսկին պատկերել է ներկայանալի ամենապայծառ գույներով և ումանտիկական թափով: Նա աչքի է ընկնում կատարման թեթևությամբ ու փայլով: Դա նորություն էր այն ժամանակվա բնանկարչության մեջ: Այդ նորությամբ, ամենից առաջ, նրա հերոսական բովանդակության մեջ էր՝ բնանկարչության մեջ նրա մուծած արևելյան հախուռն տոմայերամենտը, կենսահաստատության ուժը և կերպարների վեհությունը:

«Իններորդ ալիքը» դարձավ Ալվազովսկու ստեղծագործությունների առաջին շրջանի բնորոշ պատկերը: Իր հիմքով ռեալիստական այս ստեղծագործության մեջ առկա է ժամանակակից պրոգրեսիվ ումանտիզմի շունչը:

Հովհ. Ալվազովսկու վաղ շրջանի ստեղծագործություններում նկատվող այդ ումանտիզմը և որոշ էֆեկտայնությունը երևան է եկել նաև «Երեկո Վենետիկում» (1843), «Նավաբեկում», «Վենետիկ» (1849), «Ռեկել» (1844) պատկերներում և Հայաստանի պետական

$$A \frac{\pi}{41322}$$



Ձկնորսները ծովափին. 1852

պատկերասրահում ցուցադրվող «Նավաբեկությունից փրկվողները» (1844), «Զկնորսները ծովափին» (1852), «Արեւածաղը Թեոդոսիայում» (1855) նկարների մեջ:

Հետագայում՝ 70—80-ական թվականներին նա ստեղծում է խորապես ռեալիստական պատկերներ, որոնցից առավել բնորոշ է «Սև ծովը» մոնումենտալ ստեղծագործությունը: «Այս պատկերի մեջ ուշինչ չկա բացի օդից և ջրից,—գրում է ռուս նշանավոր նկարիչ և քննադատ Ի. Կրամսկոյը,—դա անսահման օվկիանոս է, ո՛չ փոթորկալից, բայց ալեկոծվող, խիստ, անվերջ, իսկ երկինքն է՛լ ավելի անծայր: Դա մեկն է այն մեծագույն պատկերներից, որպիսիք ես գիտեմ»: Կրամսկոյը նշում է, որ նրա ժամանակակից շատ նկարիչներ «հիացած էին այդ պատկերի մոթով ու բարձր պոեզիայով»¹:

Այդ նույն շրջանի լավագույն ստեղծագործություններից են Հայաստանի պետական պատկերասրահի սեփականությունը կազմող «Վերջալույս», «Նեապոլի ծովածոցը մառախլապատ առավոտյան» (1874), «Քրիստափոր Կոլումբոս» (1880), «Անդորրություն» (1892), «Արեւածաղ» և այլ պատկերներ: «Նեապոլի ծովախորշը մառախլապատ առավոտյան» մեծակտավ պատկերը ներկայացնում է այգաբացի տեսարան: Նկարիչը զարմանալի ճշտությամբ վերարտադրել է խոնավությամբ հագեցված վաղ առավոտվա օդային միջավայրը և հորիզոնում երևացող արևի առաջին ճառագայթները, որոնք ջերմացնում են արշալույսի այդ խաղաղ տեսարանը: Հարավային բնության ծովափնյա տեսարանին նկարիչը տվել է պլեներային (բացօդյա) լուծում, ստեղծելով արթնացող օրվա պոետիկական պատկեր: Ինչպես միշտ, այս կտավում էս, նկարիչը գրել է կենցաղային մոտիվ: Նա պատկերել է իտալացի աշխատավորի մի ընտանիք, որը էշով մրգեր է բերել ծովափ վաճառելու համար: Սա կյանքում դիտված առօրյա անցք է, որն այս կոմպոզիցիայում իր հաջող տեղը գտած լինելով, ավելի աշխույժ և գրավիչ է դարձրել պատկերը: Ծովափը, խաղաղ, հայելապատ մակերեսով թափանցիկ ջուրը, մարդիկ և առաքաստանավերն այստեղ նկարված են համողիչ և այնպիսի սուր դիտողականությամբ, որ նրանց տեսնելիս դիտողը զգում է իրեն ոչ այնքան պատկերի առաջ, որքան տեսարանի մեջ՝ բնության

¹ «Книга для чтения по истории русского искусства, 1948, вып. IV, стр. 29.



Գրչանկար

գրկում: Դրանումն է այս ստեղծագործության գեղարվեստական արտահայտչականության ուժը:

Նույն շրջանում նկարած «Միածան», «Փոթորիկ Այա հրվանդանի մոտ» (1875), «Ալեկոծություն ծովում» (1876) և ուրիշների մեջ նկարիչը դարձյալ պատկերել է ալեկոծման տեսարաններ: Այդ պատկերներում մեծ ծովանկարիչը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ անհավասար ուժերի՝ բնության ահեղ տարերքի և մարդկանց կամքի միջև տեղի ունեցող օրհասական պայքարում մարդիկ, այնուամենայնիվ, իրենց չեն կորցրել: Զուրն ընկած մի մարդ նույնիսկ փորձում է բարձրանալ նավակի մեջ... Պետք է նկատել, որ նրա բաղմահազար ծովանկարներում մեծ մասամբ առկա է մարդը: Թեև նրանք պատկերվել են փոքրածավալ, սակայն մանրամասնորեն մշակված, որոշակի շարժումը, նպատակային ֆիզիոնոմիայով օրգանապես կապվում են պատկերների բովանդակության հետ, լրացնում, բացահայտում ստեղծագործության հիմնական գաղափարը և նկարչի մտահղացումը:

Բնորոշ է, օրինակ, «Նավախորտակում» 1876 թվականի գեղանկարը: Այստեղ ևս պատկերված է փոթորիկի տեսարան ծովափի մոտ: Առաջին պլանի վրա է արդեն խորտակված առագաստանավի


շարդված կայմի մի բեկոր, որը լողում է ալիքների մեջ: Հսկա ալիքները փոքրիկ նավակում պատսպարված մարդկանց նետում են դեպի ժայռոտ ափերը: Վերևում՝ արևից լուսավորված ժայռի վրա կանգնածները ուշադիր հետևում են դժբախտներին և ձեռքով ցույց տալիս փրկության ուղին՝ ժայռերի աջ կողմը, քանի որ ուղղահայաց ժայռի մոտ, ուր հակայական ալիքները ուժգնորեն զարկվելով քարերին, փշրվում են օդի մեջ՝ ցրելով ջրի մանրիկ փոշիներ, վայրէջքի ոչ մի ելք չկա:

1880—90-ական թվականներին Ալավզովսկու ստեղծած բազմաթիվ պատկերներից առանձնապես նշանավոր են «Առագաստանավը ծովափին» (1885), «Ծովափի ժայռերի փլզումը» (1883), «Պուշկինի հրաժեշտը ծովին» (1887), «Թարմ քամի» (1889), «Անդորր» (1892), «Նիագարայի ջրվեժը» (1893), «Կովկասյան լեռները ծովի կողմից» (1894), «Լուսնյակի դուրս գալը Թեոդոսիայում» (1899) և ուրիշներ:

Կյանքի վերջին շրջանում՝ 1898 թվականին, 81 տարեկան հասակում, Ալավզովսկին 10 օրում նկարում է «Ալիքների մեջ» մեծակտավ պատկերը (2.82×4.25), որը դառնում է մեծ ծովանկարչի անցած ստեղծագործական ուղու և նվաճումների հանրագումարը: Դա մի ֆենոմենալ ստեղծագործություն է, որն իր բարձր արվեստով նմանը չի ունեցել համաշխարհային ծովանկարչության մեջ:

«Ալիքների մեջ» պատկերը ներկայացնում է բաց ծովը ալեկոծման պահին: Դիտողի առաջ բացվում է ծովային բնության ահեղ տարերքի հոյակապ տեսարան: Նկարի սյուժեն կազմում են սև, ամպամած երկինքը և փոթորկոտ ծովը: Այստեղ ամբողջ կտավը ներկայացնում է միայն ալեկոծվող, կարծես թե եռացող ծովը՝ հսկա ու լայնածավալ ալիքներով:

Ալիքների ութմիկ դասավորությունը և լույսի համապատասխան տեղաբաշխումը կազմում են պատկերի կոմպոզիցիան: Այդ կոմպոզիցիայում նկարիչը ընդգծել է հատկապես նրա կենտրոնական մասը, ուր ցույց է տրված արևային լույսով ողողված թափանցիկ ալիքների շարժումը: Դրա համար նկարիչն օգտագործել է ճոխ ննրկապնակ: Նրա գունային գամայում կան բոլոր սառը երանգները՝ մոխրագույն, կապույտ, մուգ կապույտ, կանաչ և այլ գույներ, որոնք պատկերին տալիս են այն տպավորությունը, ինչ զգում է մարդը քամու ժամանակ ծովի ալիքներին մոտ լինելու սրահին: «Ալիքներ»




Փոթորիկ ծովափի մոտ. 1850

րի մեջ» պատկերն աչքի է ընկնում կոմպոզիցիայի պարզությամբ և հստակությամբ: Խիստ համոզիչ, բնականորեն են վերարտադրված ծովի փրփրակալած ալիքների հղոր ուժը, որոնք աչքի են ընկնում նաև կատարման թեթևությամբ:

Իր բազմաթիվ ստեղծագործություններով Ալվադովսկին ցույց տվեց ծովային բնության յուրահատուկ գեղեցկությունները, ծովի տարերքը և նրա վեհությունը: Նա անվերապահորեն հաստատեց, թե ծովի թեման որքան կարևոր և նպատակահարմար է մարդկային ապրումները, հասարակական հուզող հարցերը արտահայտելու համար: Դա խոշոր շափով նպաստում է բնանկարի մեջ ծովանկարչության, որպես ինքնուրույն ժանրի, ստեղծմանն ու զարգացմանը: Նա ծովանկարչությանը տվեց նոր, հուզական և գեղարվեստական բարձր բովանդակություն և կերպարային նոր լուծում: Նա բերեց նոր սյուժեներ, նոր, սեփական մոտիվներ և նոր ձևեր ծովային անհուն, անժայռածիր ջրերի, նրանց մակերեսի թափանցիկության, խորության և ծովային բնության բազմազան պահերի ու տարերքի պատկերման մեջ: Հավանաբար հագեցված նրա ստեղծագործությունները, որոնք ամրապնդում են մարդու կամքը բնության ահեղ տարերքի դեմ մղվող պայքարում, միաժամանակ ճանաչողական խոշոր նշանակություն ունեն:

Հանդես գալով մեծ մասամբ ռուս գեղարվեստական մշակույթի միջավայրում, Հովհ. Ալվադովսկին իր բարձրարվեստ ստեղծագործություններով խոշոր ծառայություն մատուցեց ռուսական նկարչությանը: Նա դարձավ ռուսական բնանկարչության սյուներից մեկը և միաժամանակ, հիմք դրեց ռուսական ծովային մարտանկարչությանը:

Պետք է նկատել, որ Ալվադովսկին շատ է նկարել ռուսական ռազմական նավատորմի ժարտական գործողությունների թեմաներով պատկերներ: Հայտնի են «Զեսմենի ճակատամարտը», «Մարտ Նավարինի մոտ» (1848), «Սինոպի ճակատամարտը» (1853), Ղրիմի և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների թեմաներով բազմաթիվ պատկերները, որոնց մեջ նա մեծարում է ռուսական զինքի հաղթանակը, ռուս ծովայինների հերոսությունները, ռուսական զինքի հաղթանակի մեջ տեսնելով նաև Թուրքիայում տառապող իր հայրենակից արևմտահայերի ազատագրությունը: Հայրենասեր նկարիչը Ղրիմի պատերազմի ժամանակ, վտանգելով




Փրթորիկ Այա հրկանդանի մոտ. 1875

իր կյանքը, լինում է ռազմաճակատում, ղինվորների մոտ՝ նրանց խրամատներում և նույնիսկ պաշարված Սևաստոպոլում, տեղում, բնականից նկարելով մարտական անցքեր և հերոսներին: Նրա կյանքի վերջին օրվա սկսած նկարն էլ եղել է «Թուրքական նավի պայթյունը»:

Իր այդ ստեղծագործություններով նա տվեց ծովանկարչության ու մարտանկարչության լավագույն օրինակներ և ուղի հարթեց նոր սերնդի նկարիչների համար: Հովհ. Ալվազովսկին միաժամանակ բարերար ազդեցություն ունեցավ բազմաթիվ ռուս երիտասարդ նկարիչների, այդ թվում Ա. Սավրասովի, Ա. Բոգոլյուբովի, Լ. Լազո-րիոյի, Ա. Կուինչիի, Ն. Դուբովսկու, Բ. Սուզկովսկու, իր թոռների՝ նկարիչներ՝ Ա. Գինզբուրի, Մ. Լատրիի և շատ ուրիշների վրա, նպաստելով ծովանկարչության ժանրի զարգացմանը ռուսական կերպար-վեստի մեջ: Թերևս այդ և բազմաթիվ այլ ծառայությունները նկատի ունենալով մեծ քննադատ, արվեստագետ Վ. Վ. Ստասովը, նշելով, որ Հովհ. Ալվազովսկին «նոր ուղու վրա է մղել ուրիշներին»:

Շատ մեծ է Հովհ. Ալվազովսկու տեղը և նշանակությունը նաև XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ: Ալվազովսկին փառահեղ սկիզբ դրեց հայկական ծովանկարչությանը և իր բարձրար-վեստ ստեղծագործություններով ու համաշխարհային փառքով ոգե-վորության աղբյուր եղավ հայ նկարիչների համար: Հովհ. Ալվազով-սկին նկարել է աշխարհի շատ ծովեր և օվկիանոսներ: Նրա բազմա-հազար ստեղծագործությունները պատկերում են Բալթիկ, Սև և Կասպից ծովերը, Միջերկրական և Հյուսիսային ծովերը, Ատլանտ-յան օվկիանոսը, մի շարք լճեր (Սևան, Լադոգա), գետեր և ջրանցք-ներ (Վոլգա, Դանուբ, Մոսկվա, Նևա, Թերեք, Սուգդի ջրանցքը, Նիա-գարայի ջրվեժը), բազմաթիվ ծովափնյա, գետափնյա, լճափնյա տեսարաններ, հեղեղներ և, վերջապես, «Համաշխարհային ջրհեղե-ղը», որոնք ներկայացնում են տարբեր երկրների բնությունը:

Մեծ ծովանկարչի առանձնահատկությունն այն է, որ նա համո-ղիչ ճշտությամբ է վերարտադրում տվյալ երկրի բնությունը, միշտ և ամենուր պահպանելով իր անհատականությունը: Այդ անհատա-կանության բնորոշ կողմերից է նրա ծովանկարների գունեղությունը: Ռուսական բնանկարը, մինչև Ալվազովսկու հանգես գալը, ինչպես գրում են ռուս արվեստագետները, ծովային բնության այգօրինակ գունեղ պատկերներ չունեցավ: «...Ես արաջին անգամ տեսա գույների



Иркутск. 1868

այնպիսի փայլ կտավի վրա, որ նույնիսկ մոռացա Տյորներին: Կապույտ, կանաչ, սպիտակ, մոխրագույն և կարմիր պատկերները ինձ ուղղակի կուրացրին,—գրում է ռուս նշանավոր ծովանկարիչ Ա. Բոգոլյուբովը, վկայելով, որ «Այն ժամանակ մեր շրջանում արդի բնանկարիչների մեջ չկար մեկը, որ ունենար այնպիսի գույներ, ինչպես նա»¹:


Ծովանկարների այդօրինակ գունեղութունն իր մեջ կրում էր արևելյան տարր և շատ բան գալիս էր հենց Հովհ. Այվազովսկու ազգային խառնվածքից: Նրա ստեղծագործությունների այդ առանձնահատկությունը վաղուց ի վեր նկատվել է ինչպես ժամանակակիցներին, նույնպես և նկարչի հետագա կենսագիրների կողմից: Այվազովսկու ստեղծագործություններում նկատվող արևելյան տարրը արտահայտվում է ոչ միայն նրա պատկերների բովանդակության, մոտիվների կամ տեմպերամենտի մեջ, բլրը իրոք նորություն էր այն ժամանակ, այլև ծովային տարերքի ինքնօրինակ, յուրատիպ մեկնաբանության և հատկապես կոլորիտի մեջ: Մեծ ծովանկարչի համարյա բոլոր կենսագիրներն էլ նշում են այն փաստը, որ Այվազովսկուն ամենից ավելի հաջողվել է նկարել արևելյան, ինչպես նրանք են գրում՝ հարավային, ծովային բնության պատկերներ: «Նրա պատկերների մոտիվները,—գրում է նկարչի առաջին կենսագիր Ն. Ն. Կուզմինը,—նման և ճշգրիտ են վերարտադրել հարավային բնության գույները»²: Հարազատ բնությունը ոգևորել է նրան ստեղծագործելիս: «Հարավային գիշերվա, երկնքի, հարավային արևմուտի հրապույրը, սարսափը, մարդու հոգու վրա ազդող փոթորիկը կամ մրրիկը—ահա այն զգացմունքները, որոնք ոգևորում են ինձ, երբ ես նկարում եմ»—ասել է նկարիչը իր ինքնակենսագրականում³: «Նա, որ մանկուց բնութագրել էր արևի շողերով հագեցված օդին և մեծացել տոթակեղ հարավում, ցանկանում էր կտավի վրա ավելի գունեղ բնություն պատկերել, քան այդ անում էին նրա նախորդները» հաստատում է նկարչի հետագա տարիների կենսագիրը⁴: Գ. Բաշինջադյանը գրում

¹ А. Боголюбов, Записки моряка-художника, 1856—1857 гг. см. «Русская старина», 1888, № 2.

² Н. Н. Кузьмин, И. К. Айвазовский и его произведения, изд. Булгакова, 1901, стр. 85.

³ «Русская старина», 1881, т. 31.

⁴ Н. Барсамов, И. К. Айвазовский, 1950, стр. 110.



Արարատ լեռան հովտը, 1882

է, որ ծովանկարիչն իր լավագույն ստեղծագործություններում արտահայտում է «խակական արեւելքը»¹:

Իր այդ արեւելյան տեմպերամենտով, բազմաթիվ նոր մոտիվներով, վառ, գունեղ ու ջերմ կոլորիտով և բարձրարվեստ, մինչև այժմ էլ չգերազանցված ծովանկարներով Հովհ. Ալվազովսկին հարստացրեց ինչպես ռուսական, նույնպես հայկական նկարչությունը XIX դարում:


Հայ նկարչությունը Ալվազովսկին հարստացրել է նաև զուտ հայկական թեմաներ ընդգրկող հայրենատենչ հուշերով լի մի շարք պատկերներով: Նա նկարել է Հայաստանի բնության տեսարաններ, հայ ժողովրդի կյանքի, կենցաղի ու պատմական անցյալի թեմաներով պատկերներ ու հայ մարդկանց բազմաթիվ դիմանկարներ:

Հայաստանի բնության տեսարաններ պատկերող նրա ստեղծագործություններից ամենից ավելի հայտնի են Արարատ լեռան, Արարատյան դաշտի և Սևանա լճի պատկերները: Հովհ. Ալվազովսկին Արարատյան դաշտը նկարել է բազմիցս: Դեռևս 1860-ական թվականներին Անդրկովկասում կատարած ճանապարհորդության ընթացքում նա նկարում է Արարատի և Սևանի գեղատեսիլ բնության պատկերներ, որոնք 1868—1869 թթ. ձմռանը ցուցադրում է Թիֆլիսում բացած իր պատկերահանդեսում: Մինչ այդ հայ նկարիչներից ոչ ոք չէր նկարել Արարատը և Արարատյան դաշտի պատկերներ: Նկարիչ-հայերից Հովհաննես Ալվազովսկին առաջինն էր, որ 1868 թ. նկարելով հայրենի բնության տեսարաններ, ցույց տվեց հայրենիքի գեղեցկությունը և սրեց հայ հասարակության և երիտասարդ նկարիչների հետաքրքրությունը հայաստանի բնության նկատմամբ:

Արարատի և Արարատյան դաշտի թեմային հայրենասեր նկարիչը անգրադառնում է նաև հետադաշտում՝ 1880-ական թվականներին ևս: Մեզ հասել են «Արարատ լեռան հովիտը» (1882) և «Արարատ» (1887) պատկերները²: «Արարատ լեռան հովիտը» պատկերում է Արարատյան դաշտը և մեծ ու փոքր Արարատները վաղ առա-

¹ «Кавказское слово», 1917, № 173.

² «Արարատ լեռան հովիտը» (1882) պատկանում է ՍՍՀՄ ժող. արտիստուհի Մ. Մակոսկովային, իսկ «Արարատը» (1887) նկարիչը նվիրել է Վենետիկի Միլիթարյան միաբանությանը և այժմ գտնվում է նրանց գրադարանում (ս. Ղազար կղզում):




Արարատ, 1887

վոտյան: Նկարիչը ճշմարտորեն վերարտադրել է արագ անցնող վա-
ղորդյան մթուժյունը պեյզաժում: Հորիզոնում երևացող լեռների և
հատկապես Արարատի հավերժական ձյունով ծածկված սպիտակ
գագաթների վրա, ուր արդեն ընկել են արևի առաջին ճառագայթնե-
րը և բարձր կապտավուն երկնականամարում սահող սպիտակ նոսր
ամպերի մեջ այգեբացի արևը շողում է իր փայլով: Առաջին պլանում
նկարված, ճանապարհով դանդաղորեն դեպի դիտողը եկող քառ-
վանը և մարդկանց ֆիգուրներն ավելի կենդանի և արտահայտիչ են
դարձնում ընդհանուր տեսարանը: Ճանապարհի մի կողմում նկարի-
չը պատկերել է մի քանի խաչքար-դամբարանաքարեր՝ հայերեն ար-
ձանագրություններով: Հենց այստեղ էլ՝ պատկերի ձախ կողմի ներ-
քևի անկյունում, մի քարի վրա Այվազովսկին դրել է իր ստորագրու-
թյունը՝ «Այվազեան, 1882», իսկ պատկերի աջ կողմի ներքևի ան-
կյունում՝ «Айвазовский»:

«Արարատ» պատկերը (1887) ներկայացնում է Արարատյան
դաշտի և Արարատ լեռան համարյա նույն տեսարանը, սակայն կես-
օրին: Զենիթում գտնվող արևի հրեղեն ճառագայթներից պայծա-
ռորեն լուսավորված Արարատ լեռան և կանաչ հարթավայրի պատ-
կերը կարծես հաջորդում է նկարչի նախորդ ստեղծագործության: Ո-
քոշակի վերարտադրված են Արարատ լեռան կառուցվածքը, լեռնա-
յին մասիվի և նրա ապառի նյութականությունը, արևի ոսկեղօծ ճա-
ռագայթներով լուսավորված Արարատյան դաշտի ընդարձակությու-
նը: Բնանկարի հարազատությունն ավելի համոզիչ է դարձնում
պատկերի առաջին պլանը, ուր նկարված են ճանապարհով անցնող
մի խումբ մարդիկ՝ տեղացի հայեր, իրենց ազգային տարազով: Այս
պատկերի տակ ևս նկարիչը ստորագրել է հայերեն՝ «Այվազեան»:

Գեղեցիկ և վարպետությամբ պատկերելով Արարատը և Արա-
րատյան դաշտի տեսարանը, Այվազովսկին դրսևով իսկ նոր թեմա
բերեց հայ նկարչության մեջ: Նրանից հետո Արարատը և նրա դաշ-
տավայրի տեսարանները ամենասիրված թեմաները դարձան հայ
նկարիչների համար:

Արարատի և Արարատյան դաշտի տեսարանը սիրված թեմա է
դառնում նաև իրեն՝ Այվազովսկու համար: Հետաքրքրական է նկա-
տել, որ հայկական թեմաներով նկարած իր սյուժետային մի քանի
պատկերների մեջ («Հայ ժողովրդի մկրտությունը», «Խրիմյան Հայ-
րիկը էջմիածնի շրջակայքում» և ուրիշները), որպես գործողության



Նույն խմբում է Արարատից, 1887

միջավայր Այվաղովսկին պատկերել է Արարատյան դաշտը, Արարատ լեռը մեծ ու փոքր գագաթներով:

Արարատյան տեսարանների մենք հանդիպում ենք նաև բիր-լիական սյուժեներով նրա մի շարք ստեղծագործություններում: Ամենից ավելի հանրահայտ են «Համաշխարհային ջրհեղեղը» թեմայով նրա բազմաթիվ պատկերները, որոնցից մեկը՝ «Նոյը իջնում է Արարատից» գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում: Հովհ. Այվաղովսկին այդ պատկերը մի քանի այլ ծովանկարների հետ, 1896 թ. նվիրել է էջմիածնի մատենադարանին: «Նոյը իջնում է Արարատից» պատկերը ներկայացնում է Արարատյան դաշտի մի գեղեցիկ տեսարան: Նրա առաջին պլանը և կենտրոնական մասը Արարատյան դաշտն է, որը վերջանում է Մասիս լեռան ուրվանկարով: Լեռը մշուշի մեջ է ու հաղիվ նշմարվում են նրա գագաթների եղրագծերը: Օդը լցված է աշխարհածածկ ջրի գոլորշիով, որի միջից արևն անգամ չի երևում: Արարատյան դաշտավայրում տեղ-տեղ երևում են փոքրիկ լճակներ, որոնք զոյացել են ետ քաշված ջրի մնացորդներից: Այդ լճակների մոտից դեպի դիտողն է գալիս Արարատից իջած Նոյը, իր հետեից բերելով քարավանը: Ամբողջ պատկերը դիտողի վրա թողնում է ուժեղ տպավորություն: Նա խորապես զգացողական է և աչքի է ընկնում օդային, արծաթավուն գամմայով:

Որ այդ սյուժեով պատկերների մեջ մեծանուն նկարիչը ձգտել է պատկերել հայրենի բնությունը, հայ ժողովրդի բնօրրանը՝ մայր Հայաստանը, այդ մասին ունենք հենց իր՝ Այվաղովսկու վկայությունը: Փարիզում կազմակերպված Այվաղովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսի մասին «Բազմավեպ» հանդեսի թղթակիցը 1889 թ. հաղորդում է. «Ես հանդարտությամբ կդիտեի նկարը, երբ հանկարծ մոտեցավ ինձի նկարչապետն ու ըսավ.


— Անշուշտ հայկական նյութ մը կփնտրես իմ նկարացս մեջ:

— Այո՛, տեր, լավ գուշակեցիք միտքս. — պատասխանեցի: Ու տարավ զիս սրահին մեջ ու ցուցուց հեռուեն և ըսավ.

— Ահա մեր Հայաստանը»:

Այդ «Նոյը իջնում է Արարատից» պատկերն էր:

Հայաստանի բնության պատկերներից բացի Այվաղովսկին Անդրերկրվկասում շրջագայելիս նկարում է նաև Կովկասյան տեսարաններ, որոնց մի մասը ցուցադրում է Թիֆլիսում 1868 թ. կազմակերպած անհատական նկարահանգեսում: Կովկասյան թեմաներով



P. G. H., 1868

պատկերներ նա նկարում է նաև հետագայում: Հայտնի են օրինակ, «Դարչալի կիրճը», «Կովկասյան լեռնաշղթան», «Զյան փլվածք Ռազմավիրական ճանապարհին», «Կաղբեկ», «Քունիք լեռը» և ուրիշներ: Այդ ստեղծագործությունները Հայաստանի բնության պատկերների հետ ցույց են տալիս, որ հայրենի բնության թեման Այվազովսկու համար եղել է հարազատ, որին նա անդրադարձել է հաճախ և մեծ սիրով:

Հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի թեմաներով Այվազովսկու նկարած պատկերներից մեկ հայտնի են «Թիֆլիսը», «Հովիվները հոտի հետ» և հայկական ջարդերի թեմաներով պատկերների շարքը:

«Թիֆլիսը» (1868) պատկերում է մերձքաղաքային կանաչավետ վայրում մի խումբ տղամարդկանց ու կանանց ուրախ ժամանցի տեսարան: Առաջին պլանում՝ գետինին, կանաչի վրա փռված գորգի վրա. նստել են կանայք և տղամարդիկ, որոնցից մեկը նվագում է: մյուսները ծափ են տալիս, իսկ մի կին նրանց մեջտեղում պարում է: Երկրորդ պլանում՝ ծառերի տակ, տղամարդիկ խառույկ վառած խորոված են պատրաստում, իսկ մեկը երկանիվ սալով նոր ուտելիքներ է բերում: Հեռվից երևում է ճանապարհով ընթացող ուղտերի քարավանը: Այս ամենը պատկերված է արևելյան այդ հին քաղաքի՝ միահարկ և հարթ տանիքներով տների, ընդհանուր տեսարանի ֆոնի վրա: Այստեղ բնության տեսարանը, մարդկանց և նրանց ազգային տարազը Այվազովսկին նկարել է բնականից և սուր դիտողականությամբ: Հիանալի նրբանկատությամբ են վերարտադրված մարդկանց շարժ ու ձևը, նրանց հագուստը, միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները և դիմագծերի այնպիսի հատկանշական գծեր, որոնք հիշեցնում են նույն ժամանակ Թիֆլիսում ապրող և գործող նկարիչներ Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի ստեղծագործություններում եղած մարդկանց պատկերները:

Բնավ պատահական չէ, որ հենց նույն այդ շրջանում՝ XIX դարի 60-ական թվականներին Ստ. Ներսիսյանը ստեղծում է «Ժամանց գետափին» կենցաղային թեմայով մեծակտավ պատկերը, որը նույնպես ներկայացնում է Թիֆլիսի մերձքաղաքային մի տեսարան՝ խընջույքի նստած մարդկանց պատկերներով: Այժմ դժվար է ասել, թե այդ թեմայով պատկերը ով է ումից առաջ նկարել, քանի որ Ներսիսյանի այդ նկարի տարեթիվը ճիշտ հայտնի չէ: Սակայն այն փաստը, որ ինչպես Ներսիսյանը, նույնպես և Այվազովսկին միևնույն

շրջանում նկարել են քաղաքի շրջակայքում խնջույք-ժամանցի թեմայով երկու առանձին պատկերներ, ասում է այն մասին, որ այդպիսի ուրախ ժամանցները սովորական են եղել:

Թիֆլիսում եղած ժամանակ, շրջապատված գլխավորապես հայ հասարակության ջերմ ընդունելությամբ, Ալվազովսկին ոչ միայն այդպիսի շատ խնջույքների թանկագին հյուր է եղել, այլև, ինչպես վկայում է Բաշինջադյանը իր հոգվածում, նա ականատես է եղել ալյատեղ սովորություն դարձած կոպիտ բռնցքամարտի և «դարձել մեզանում բռնցքամարտի (кулачный бой) վերջանալու պատճառը»¹:

Նկարիչը, սակայն, իր ստեղծագործության համար ընտրել է հենց այնպիսի թեմա, որ շատ բնորոշ և հատկանշական է եղել այդ քաղաքում ապրող հայերի կենցաղում: Այսպիսով, Ալվազովսկու «Թիֆլիսը» պատկերը արտացոլում է մեր ժողովրդի կյանքի և կենցաղի մի դրվագ: Այդ ստեղծագործությունը Ստ. Ներսիսյանի «Ժամանց գետափին» պատկերի հետ մտել է XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ որպես հայկական ազգային ռեալիստական կենցաղային նկարչության առաջնեկը:

Հովհ. Ալվազովսկին նկարել է նաև գյուղական կյանքի ու աշխատանքի թեմաներով պատկերներ, որոնցից առավել հետաքրքրություն է ներկայացնում «Հովիվները հոտի հետ» մեծակտավ պատկերը:

Այստեղ Ալվազովսկին նկարել է իր սեփական ոչխարներին ու նրանց հայ հովիվներին: Նա պատկերում է դաշտում՝ լայնախիտ ձյուղերով ծառի տակ ու նրա շուրջը խմբված ոչխարների մեծ հոտ և մի քանի հովիվներ, որոնցից մեկը կանգնած շվի է փշում: Հովվերգական բնույթ կրող այդ պատկերում, ինչպես և Ղրիմի գյուղացիների աշխատանքը պատկերող այլ նկարների մեջ, Ալվազովսկին արտահայտել է իր սերն ու համակրանքը բնության ու հողի համեստ մշակների նկատմամբ:

Հայկական ջարդերի թեմաներով Ալվազովսկու ստեղծագործություններից առանձնապես կարևոր են «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին», «Հայերին լցնում են նավերը» և «Կենդանի հայերին թուրքերը թափում են Մարմարա ծովը» մեծակտավ պատկերները, որոնք արտացոլում են 1890-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերի ողբերգական անցքերը: Այդ

¹ «Մշակ», 1917, № 159:

պատկերները մեղ շեն հասել. պահպանվել են միայն նրանց լուսանկարները:

«Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին» պատկերը ներկայացնում է Տրապիզոն քաղաքի ծովափնյա շրջանը, որտեղ սովորում էին Համիդի բաշիբոզուկները սրբերով կոտորում են անգլեն հայերին: Մովսիս թափված են բաղմամբով դիակներ, իսկ մարդկային արյունը պատել է ամբողջ ծովափը: Մովսիս հանդարտ է, նա կարծես սառել է կատարվող եղեռնագործությունից: Ավելի ծանր ու սարսուռ է առաջացնում մյուս նկարը, որը պատկերում է Մարմարա ծովում կանգնած թուրքական նավից կենդանի հայերին ծովը նետելու ոգրերգական տեսարանը: Այդ, ինչպես և մյուս պատկերները նկարիչը ժամանակին ցուցադրել է Օդեսայում, Մոսկվայում և այլ քաղաքներում, ամենուր ցնցող տպավորություն գործելով դիտողների վրա:

Բնորոշ է, օրինակ, Մոսկվայից ստացված մի հոդված այդ մասին, որը հրապարակել է «Մշակ» թերթը 1898 թվականին: Խոսելով Մոսկվայի ցուցահանդեսում Այվազովսկու ներկայացրած հայկական ջարդերի թեմաներով պատկերների մասին, «Մշակի» թղթակիցը գրում է. «Տրապիզոնի կոտորածը սարսափելի է: Մարդկանց ոչ թե կոտորում, այլ սաղ-սաղ ածում են ծովը... Մարդիկ փախչում են, բայց ո՞ւր... Մարդիկ աղաչում են, բայց ո՞ւմ... Առանց արտասովոր չի կարելի դիտել այդ դժբախտ զոհերին»¹:


Հայերեն գրած նամակներից մեկում Այվազովսկին նույնպես արտահայտում է իր ցավը հայկական ջարդերի կապակցությամբ:

«Խորին ցավով վշտացած է սիրտս անբախտ հայոց լլված, չտեսնված կոտորածով,— գրում է նա Խրիմյան Հայրիկին,— Ձեր վեհափառությունն աչդտեղ, մենք այստեղ և ամենքն իրենց տեղեր կուլանք և կողբանք մեր թշվառ, կորստեան մատնուած հայոց վրա և կխնդրենք աստվածային գթություն»: Նա ավելացնում է, որ ինքը մտադիր է «նկարել կարմիր գույնով հայոց կոտորածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար հայոց Հայրիկին ավերակաց վրա»:

Մեղ հայտնի չէ, նկարե՞լ է նա այդպիսի պատկեր, թե՞ ոչ. սակայն, ինչպես հաղորդում է ժամանակակից մամուլը, հայկական ջարդերի ծանր տպավորությունը նա արտահայտել է նաև այդ տա-

¹ «Մշակ, 1898, № 44:

Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին



րիններին նկարած մի շարք՝ ծովանկարներում, մասնավորապես «Լուսնյակ գիշեր», «Միայնակ առագաստանավը ծովում» և այլն:

Ժամանակակիցներից մեկը գրում է, որ Ալվազովսկու «Ուրախ և զվարթ դեմքը թախիժ էր արտահայտում այն բոսին, երբ Թուրքիայից փախած հայ գաղթականները պատմում էին այն ահռելի ու սարսափելի տեսարանների մասին, որոնք տեղի ունեցան 1896 թվականին... Տողերիս գրողը շատ անգամ էր նկատում, թե ինչպես արցունքներ էին ցայտում ծերունու աչքերից, երբ Թուրքիայից եկած հայը հուզված պատմում էր իր քույրերի առևանգման և որդիների կոտորման մասին»¹:

Համակված իր ժողովրդին նաև նյութապես օգնելու ցանկությամբ, Ալվազովսկին վաճառում է իր ծովանկարները և նրանց գումարը հատկացնում Թուրքիայում տուժած իր աղզակիցներին: Նա, միաժամանակ, Ղրիմում ունեցած իր կալվածքներից հողամասեր ու բնակելի տարածություններ է հատկացնում հայ գաղթականներին:

Հովհ. Ալվազովսկին ստեղծում է նաև հայ ժողովրդի պատմական անցյալի թեմաներով պատկերներ, որոնցից հայտնի են «Հայ ժողովրդի մկրտությունը», «Երգում», «Կովկասի կանանց փախցընող թուրքական նավի գրավումը ուս նավաստիների կողմից» և «Բայրոնի այցելությունը Մխիթարյաններին՝ Ս. Ղազար կղզում» մեծակտավ պատկերները: Նրանցից առաջին երկուսը գտնվում են Ալվազովսկու անվան պատկերասրահում (Թեոդոսիա), իսկ վերջին երկուսը՝ Թբիլիսիի կերպարվեստի պետական թանգարանում:

Հայ ժողովրդի մկրտությունը՝ հեթանոսությունից քրիստոնեական հավատքին անցնելու պատմական իրողությունը, մեր ժողովրդի անցյալի պատմության նշանակալից անցքերից մեկն է: Այդ թեմայով պատկերի (1892) համար որպես գործողության վայր նկարիչը ընտրել է հայրենի երկրի օրրանը՝ Արարատյան դաշտը: Առաջին պլանում է հայ մարդը, որը շոքած Գրիգոր Լուսավորչի առաջ, մկրտություն է ընդունում: Գրիգոր Լուսավորիչը կաթողիկոսական գավազանը մի ձեռքում, մյուս ձեռքում՝ քրիստոնեական խաչ, կանգնել է ժողովրդի առաջ և հանդիսավորությամբ մկրտում է: Նրա ֆիգուրը այստեղ ընդգծված է լուսավոր գույներով: Նրա հանդիստ ու հանդի-

¹ «Մշակ», 1898, № 32:


սավոր կեցւածքը, հայկական ազգային եկեղեցական տարազը և բարեհամբույր դիմքը գրավում են դիտողի ուշադրութունը: Նկարիչը ճշտորեն վերարտադրել է ինչպես մկրտվող մարդու, նույնպես և Գրիգոր Լուսավորչի, նրա հետևում կանգնած հոգևոր անձանց հայկական դիմագծերը և պատմական այդ ծիսակատարութեան ազգային սովորութիւնը: Այստեղ զգացվում է պատմականութիւն, որն ավելի համոզիչ է դարձնում դիմացի քարի վրա հայերեն տառերով գրված ժամանակի տարեթվի արձանագրութիւնը՝ «Յամի տն 303»: Թեև հանճարեղ ծովանկարիչը վարպետ չէ մարդկային ֆիզիոնոմիայի պատկերման և բազմաֆիգուր թեմատիկ կոմպոզիցիոն պատկերներ ստեղծելու մեջ, այնուամենայնիվ նրան հաջողվել է իր մտահղացումը՝ հայ ժողովրդի մկրտութիւնը վերարտադրել գեղարվեստական պատկերավոր ձևով և դարձնել այն արտահայտիչ:

«Երգում» պատկերի մեջ (1891) պատմա-հայրենասիրական թեման յուրովի լուծում է գտել: Միջնադարյան հայ զորավարն իր որդու հետ չոքած հայկական հնագույն խաչքարի առաջ երգվում է: Նրանցից քիչ հեռու՝ երկրորդ պլանում, սարալանջին երևում են երկու դինավորական նույնպես դինված և մարտի պատրաստ: Այս ամենը պատկերված է Հայաստանի լեռնաշխարհը հիշեցնող տեսարանի հետ: Պատկերի բովանդակութիւնը հայրենասիրական է: Հուժկու բազուկներով զորավարը մարտից առաջ երգվում է հայրենիքի հանդեպ իր սրբազան պարտքը կատարելու համար: Այս պատկերը նկարիչը նվիրել է Ղրիմի հայոց եկեղեցիներից մեկին՝ Վարդան Մամիկոնյանի անվան եկեղեցուն: Պետք է հավանական համարել, որ հայոց եկեղեցու համար Այվազովսկու նկարած վերոհիշյալ պատկերը ներկայացնում է նրա անունը կրող զորավար Վարդան Մամիկոնյանի կերպարը: Հայ նոր նկարչութեան մեջ Հովնաթանյանի և նրանից հետո հանդես եկած նկարիչների կողմից Վարդան զորավարի պատկերներն նկարելը XIX դարում բխում էր հայ ժողովրդի և նրա առաջավոր մտավորականութեան հայրենասիրական պահանջներից: Հովհ. Այվազովսկու վերոհիշյալ պատկերը, թեև գեղարվեստական արժեքով չի հասնում նրա լավագույն ծովանկարներին, սակայն երկար ժամանակ կատարել է հայրենասիրական դեր և Թեոդոսիայի պատկերասրահ է տեղափոխվել Ղրիմի հայոց եկեղեցին փակվելուց հետո:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Կովկասի կանանց փախցնող թուրքական նավի գրավումը ռուս նավաստիների կողմից» մեծակտավ պատկերը (1888), որն արտացոլում է անցյալում թուրքերի կողմից Կովկասի կանանց գերեվարելու անցքերից մի գրվագ: Կովկասի ափերից նոր է հեռացել բազմազգ-կանանցով լրացված թուրքական առագաստանավը, երբ նրա ճանապարհը կտրում է ռուս նավաստիների առաջին ջոկատը: Թուրքերի և ռուս զինվորների միջև տեղի է ունենում հրացանաձգություն: Մի քանիսը մերկացրել են սրերը: Հեռվում երևում են ռուս նավաստիների նոր ջոկատներ, որոնք նավակներով արագորեն մոտենում են պաշարված թուրքական առագաստանավին: Ռուս նավաստիների հաղթանակը և Կովկասի գերի կանանց ազատագրումը ակնառու է: Այդ ավելի համոզիչ է դարձնում անհանգիստ ծովի տեսարանը, որը ողողված է իրիկնամուտի արևի բոսորագույն ճառագայթներով:

Պակաս ուշագրավ չէ նաև «Կարս բաղաբի գրավումը զիշեր ժամանակ» պատկերը նկարելու փաստը: Այդ պատկերի ստեղծման համար, ինչպես վկայում է նկարչի առաջին կենսագիրը, Այվազովսկին բացի գծանկարներից և լուսանկարներից, օգտագործել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կարսի գրավմանը մասնակից-ականատես հայ և ռուս զինվորականների պատմածները, ինչպես նաև պատմական փաստաթղթեր: Պատկերի տեղն այժմ անհայտ է:

Իր կյանքի վերջին շրջանում Հովհաննես Այվազովսկին նկարում է «Բայրոնի այցելությունը Մխիթարյաններին՝ ս. Ղազար կղզում» պատկերը: Ինչպես հայտնի է անգլիական ականավոր գրողը եղել է հայ ժողովրդի մեծ բարեկամը: Դժգոհ իր ժամանակի Անգլիայից, Բայրոնը հեռանում է հայրենիքից և որոշ ժամանակ ապրում Վենետիկի հայ Մխիթարյանների մոտ: Այստեղ նա մոտիկից ծանոթանում է հայ անցյալի մշակույթին, Մխիթարյանների միաբանության գրադարանում նա տեսնում է հայերեն հին և նկարագարդ ձեռագրեր, գեղեցիկ մանրանկարներ: Այստեղ նա գիտնականների մոտ սովորում է հայերեն գրել և կարդալ, ծանոթանում է հայ գրականությանը, աչնբան է հրապուրվում մեր անցյալի դասական գրականությանը, որ ձեռնամուխ է լինում հայերենից անգլերեն թարգմանել մի շարք գրական երկեր, փաստաթղթեր և կազմում է հայերեն-անգլերեն բառարան:




Կովկասի կանանց փախչելու թուրքական նավի դրակումը ուսա նավաստիների կողմից, 1888

Ահա հենց հայ ժողովրդին և նրա անցյալի մշակույթը խորապես սիրող ու բարձր գնահատող անգլիական նշանավոր գրողին է պատկերել Ալվադովսկին իր այդ կտավի վրա: Պատկերը ներկայացնում է Վենետիկի Ս. Ղազար կղզու ծովափնյա տեսարանը առազաստանավերով և գոնդոլներով: Աջ կողմում ծովափն է, ուր մի խումբ Մխիթարյաններ և նրանց երիտասարդ սաները եկել են դիմավորելու նավակով արդեն ափ իջած մեծ բանաստեղծին: Բայրոնը ձեռքերը առաջ պարզած ողջունում է հայ մտավորականներին, որոնք, ի պատիվ բանաստեղծի, գորգ են փռել նրա ճանապարհին: Գործողությունը հանդիսավոր է և տոնական: Կենսուրախ տրամադրությամբ է հագեցված ամբողջ տեսարանը: Դրան նպաստում է ափից ոչ հեռու կանգնած գոնդոլում այդ հանդիպումը հետաքրքրությամբ դիտող մի քանի իտալացի կանանց և տղամարդկանց աշխույժ պատկերները, առանձին սիրով ու վարպետությամբ նկարված ծովը, որի խաղաղ ու հանգիստ հայելապատ մակերեսով ջրերի մեջ արտացոլվել է երկինքը սպիտակ ամպերով: Մխիթարյաններին ողջունող Բայրոնի դիրքը թեև այստեղ մի փոքր պայմանական է, սակայն արտահայտում է տվյալ պահի անմիջականությունն ու ջերմությունը: Ծովանկարիչը կարողացել է համոզիչ դարձնել հայ և անգլիական մշակույթի գործիչների մերձեցման այդ հանդիսավոր տեսարանը:

Ալվադովսկին, ինչպես ասացինք, նկարել է բազմաթիվ դիմանկարներ, մեծ մասամբ իր մերձավորներին և մի շարք անվանի մարդկանց: Նա թողել է բազմաթիվ ինքնանկարներ, որոնք ներկայացնում են նկարչին կյանքի տարբեր ժամանակներում՝ պատանի հասակում, երիտասարդ, հասուն շրջանում և ծերության տարիներին:

Ալվադովսկին կարևոր նշանակություն է տվել իր մոր՝ Հռիփսիմեի և հոր՝ Կոնստանդնի դիմանկարներին: Նրան այցելած Երվանդ Շահազիզը իր հուշերում գրում է, որ նկարիչն իր հոր և մոր դիմանկարները կախել էր տան պատկերասրահի ամենաաչքի ընկնող մասում՝ «գահլիճի ճակատին... այնպես, որ երբ գահլիճ էիր մտնում, հենց առաջին նկարները, որոնք աչքի էին ընկնում, նկարչի ծնողների նկարներ էին»: Այդ դիմանկարների մասին ինքը՝ նկարիչը ասել է Երվանդ Շահազիզին. «Իմ այս նկարում արվեստը համակված է եղել որդիական սիրո զգացմունքով»:



Բալթիկի ափը Մոսկովայից հեռավորության վրա

Այվազովսկին առանձնապես ջերմ սիրով է նկարել իր երկրորդ *Կնոջը՝ Աննա Բուռնադյանին*: Այստեղ Աննան պատկերված է հայկական ազգային տարազով, ճակատային, մետաքսյա թափանցիկ գլխաշորը գլխին և ուսերին փաթաթված, դիտողին ուղղված հայացքով: Նրա մեծ ու սև աչքերը նկարիչը պատկերել է բարձր վարպետությամբ: Գլուխը և դեմքի ներքևի մասը ծածկող թափանցիկ գլխաշորը չեն խանգարել նկարչին վերարտադրելու նրա մեղմ, գեղեցիկ, կանացիական դիմագծերը, որոնք այնքան քնքշորեն տրված նրա հայացքի հետ մի առանձին հրապույր են տալիս կերպարին: Այստեղ նկարիչը ստեղծել է երիտասարդ հայուհու ռեալիստական կերպարը: Աննա Բուռնադյանին Այվազովսկին նկարել է մի քանի անգամ: Թեոդեսիայի պետական պատկերասրահում է գտնվում «Այգեգութ» կոչված պատկերը (1881), որը ներկայացնում է Աննային մի գյուղական պատանու հետ այգում խաղող քաղելիս: Սա արդեն երկֆիգուր-սյուժետային պատկեր է կոնկրետ անձնավորության կերպարով: Լույսով ողողված Աննայի ֆիգուրը և մանավանդ նրա պայծառ, վառվռուն դեմքն արտահայտում են կյանքի ուրախությունը, որով համակված էր նկարիչը այդ տարիներին: Իր բարեկամներից մեկին գրած նամակում նկարիչը հայտնելով իր ուրախությունը Աննայի հետ ամուսնանալու մասին, գոհունակությամբ ավելացնում է, որ այդ նոր ամուսնությամբ «ավելի նորեն աս[լ]զիս մոտրկացա»:

Իր հարազատ ժողովրդին ավելի մերձենալու համար Այվազովսկին կյանքի վերջին շրջանում հաճախ է անդրադառնում հայկական թեմատիկային և հայ ականավոր անձանց պատկերմանը: 1895 թ. նա իր տանը հյուրընկալում է Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին ու այստեղ էլ նկարում նրա դիմանկարը: Նա պատկերում է Խրիմյան Հայրիկին ամբողջ հասակով կանգնած Արարատյան դաշտի և Արարատ լեռան ֆոնի վրա, այդ պատկերում արտահայտելով իր մեծ համակրանքը նրա նկատմամբ:

Նկարիչը նույնպիսի սիրով և երախտագիտության զգացմունքով նկարել է նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադիր Հովհաննես Լազարյանի, գեներալ-լեյտենանտ Լորիս Մելիքյանի և ուրիշների դիմանկարները: Նա նկարել է նաև եղբոր՝ հոգևոր գործիչ, լեզվաբան, բանասեր և թարգմանիչ Գաբրիել Այվազյանի (Այվազովս-

սկու), իր աղջկա՝ Հովհաննայի և մյուսների, ազգականներ՝ Մազիր-յանի, Արցեուլովայի և ուրիշների գիմանկարները:

Բացի գունանկարչական պատկերներից, Հովհ. Այվազովսկին ստեղծել է նաև նախագծեր հայոց եկեղեցիներ ու բնակելի շենքեր Ղրիմում կառուցելու համար: Պետք է նկատել, որ նկարիչը եղել է բազմակողմանի զարգացած անձնավորություն: Նա մանկուց նվագել է ջութակ, իսկ երիտասարդ տարիներին զբաղվել է նաև հնագիտությամբ (պեղումներով) և ճարտարապետությամբ: Նրա նախագծով է կառուցվել ոչ միայն իր սեփական երկհարկանի մենաստանը, որը դարձել է նրա անունով տուն-պատկերասրահ, այլև թանգարանի շենքը Թեոդոսիայի մոտ՝ բլուրի վրա, որը ոչնչացել է Հայրենական պատերազմի ժամանակ, աղբյուր-հուշարձանը ծննդավայրի զբոսայգում և այլ շենքեր: Վերջինս իր արեւելյան ոճով մինչև այժմ էլ գրավում է դիտողների ուշադրությունը: Օգտագործելով հայկական պաշտամունքային ճարտարապետության ավանդական աղագային ձևերը, Հովհ. Այվազովսկին ստեղծել է մի շարք նախագծեր, որոնց հիման վրա Ղրիմի հայաբնակ քաղաքներում և գյուղերում (Թեոդոսիա, Չարխափան, Հին Ղրիմ) կառուցվել են հայկական եկեղեցիներ: Նրանցից մի քանիսը պահպանվել են մինչև մեր օրերը, իսկ նախագծերից մի օրինակ այժմ ցուցադրվում է Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահի էքսպոզիցիայում:


Այս, ինչպես նաև հայկական թեմաներով վերոհիշյալ սյուժետային պատկերներն ու բնանկարները, նրա հանճարեղ ծովանկարների հետ վաղուց ի վեր մտել են հայ նկարչության պատմության մեջ որպես նրա օրգանական մասը, հարստացրել են աղագային նկարչության ժանրերը և դրական նշանակություն ունեցել XIX դարի հայ կերպարվեստի մեջ բնանկարչության, մասնավորապես ծովանկարչության, սյուժետային պատկերի, գիմանկարչության և գրաֆիկական նկարչության զարգացման գործում:

Մինչև Այվազովսկու հանգես գալը հայ կերպարվեստը ծովանկարչություն չուներ: Նու ոչ միայն ստեղծեց բարձրարվեստ ծովանկարներ, այլև տվեց նրանց որոշակի աղագային կերպարանք: Հավատարիմ աղագային կոլորիտային մշակույթին, Այվազովսկին իր նոր, գունեղ պատկերներով ուղի հարթեց երիտասարդ նկարիչների համար և ծովանկարչական շկոլա ստեղծեց հայ կերպարվեստում:

XIX դարի երկրորդ կեսում Այվաղովսկու ազդեցությունն, ամենից առաջ, արտահայտվում է արեւմտահայ նկարիչների վրա: Պուսահայ շատ նկարիչներ, այդ թվում Մ. Ճիվանյանը, Տ. Զաքարյանը, Հովհաննես Պեյզատը, քանդակագործ Ե. Ոսկանը և ուրիշներ, որոնք անձամբ ծանոթ էին Կոստանդնուպոլիս հաճախ այցելող մեծ ծովանկարչին ու նրա ստեղծագործություններին, գիտում են նկարել ծովանկարներ Այվաղովսկու նմանողությամբ: Հայտնի է, օրինակ, Մ. Ճիվանյանի «Ալեկոծ ծովը փոթորկից առաջ» պատկերը, որ կրում է Այվաղովսկու մոտիվների ուժեղ ազդեցությունը: Մ. Ճիվանյանը հաճախ իր ծովանկարների տակ դնում էր Այվաղովսկու ստորագրությունը, դրանք բարձր գնով և արագ վաճառելու համար: Նկատելով այդ, Այվաղովսկին 1874 թ. Կ. Պոլսում եղած ժամանակ ասում է նկարիչ Ս. Յազըճյանին. «Այդ տղան հիանալի վրձին ունի, բայց ափսոս, որ փչացնում է»: Այդ նույն շրջանում Կոստանդնուպոլսում հայ արվեստագետների հետ ունեցած հանդիպման ժամանակ Այվաղովսկին խրախուսելով հայ նկարիչների սերը և հետաքրքրությունը ծովանկարչության նկատմամբ, խորհուրդ է տալիս նրանց հեռու մնալ նմանողականությունից: Նա պահանջում է բնությունից նկարել, անընդհատ աշխատել, կատարելագործել վարպետությունը և երբեք չծուլանալ: Ժամանակակիցները վկայում են, որ Կ. Պոլսում եղած ժամանակ նրան այցելած երիտասարդ նկարիչ Տորք Զաքարյանին Այվաղովսկին ասել է. «Ապրի՛ս, փոքր վարպետ» ըսելով կրքաջալերել Տորքը և միասին թեյ առնելու պահին Տորքին ցույց կուտա Վոսփորի տեսարանները, ըսելով «փոքրիկ վարպետ, ահա բոլորոցդ, մեծագույն դպրոցդ՝ բնությունը»¹:

Այվաղովսկու մոտ՝ Թեոդոսիայի գեղարվեստական դպրոցում ծովանկարչություն է սովորել Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սան էմանուել Մահտեսյանը (1857—1908): Անվանի ծովանկարիչ է. Մահտեսյանը 1895 թ. Սիմֆերոպոլ բաղաբում բացում է 150 ծովանկարներ ներկայացնող իր անհատական ցուցահանդեսը, որը ժամանակակիցների վկայությամբ հաստատում է Այվաղովսկու ծովանկարչական դպրոցի գոյությունը XIX դարի հայ կերպարվեստի մեջ: Նրա ստեղծագործություններից առանձնապես հայտնի են «Գիշերը Սև ծովի վրա», «Փոթորիկ վերջալույսին», «Հանգիստ ծո-

¹ Ռ. Շիշմանյան, Բնանկարը և նրա նկարիչները, 1958, էջ 241:



Հովհ. Այվազովսկին արվեստանոցում

վը», «Ագալարի», «Փոթորիկ վերջալույսի ժամանակ» և Թեոդոսիայի պետական պատկերասրահում գտնվող «Ալեկոծ ծովը» պատկերը (1895):

Հայաստանի պետական պատկերասրահում ցուցադրվող «Ծովի տեսարան առազմատանավով» և «Փոթորիկ ծովի վրա» (1898) պատկերները իրենց առանձնահատկությամբ հանդերձ կրում են մեծ ծովանկարչի ոճի և կիրառած մոտիվների ազդեցությունը:

Անցյալ դարի 90-ական թվականներին Մյունխենի գեղարվեստի ակադեմիան ավարտած ծովանկարիչ Վարդան Մախոխյանը (1869—1937) Գերմանիայից մեկնում է Կովկաս, այցելում Ղրիմ որպեսզի տեսնի և ուսումնասիրի Ալվադովսկու ծովանկարները: Թեոդոսիայում նա անձամբ ծանոթանում, երկար զրուցում է Ալվադովսկու հետ ու աշխատում նրա խորհուրդներով: Մախոխյանը Ղրիմում եղած ժամանակ, ինչպես նաև հետագայում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Նորվեգիայում, Միջերկրական ծովի ափերին և Իտալիայում նկարում է բազմաթիվ ծովանկարներ, որոնցից ժամանակակիցները բարձր են գնահատել «Ալեկոծություն կովկասյան ափերի մոտ», «Լուսնյակ գիշեր», «Ավերակներ Սև ծովի ափին», «Ձկնորսները լուսնյակ գիշեր ժամանակ», «Լուսնի ծագումը ծովի վրա» և ուրիշներ: Հայաստանի պետական պատկերասրահում եղած «Մակընթացություն: Նորվեգիա», «Ծովանկար» (1898), «Անհանգիստ ծովը», «Ծովային տեսարան» (1905) պատկերները վերոհիշյալ ծովանկարների հետ խոսում են նկարչի խոշոր տաղանդի և հայկական ծովանկարչության ժանրի ընդլայնման մասին:

Հետագայում գրած իր հիշողություններում Վ. Մախոխյանը բարձր է գնահատում մեծ ծովանկարչի արվեստը: «Ալվադովսկին, որուն հետ ծանոթանալու մեծ բարեբախտություն ունեցա ասկե տարիներ առաջ Կովկաս գտնված ատենս, պետք է խոստովանենք ամենքս ալ, թե իրոք շատ մեծ նկարիչ մըն էր: Աննման կերպով ըմբռնած էր գույներու համերաշխությունը և անոնց թողած հոգեպարար տպավորությունը»¹: Վ. Մախոխյանը իր նամակներից մեկում գրում է, որ մշտապես փոփոխվող և անհանգիստ ծովը «նկարելու համար հարկ է ըմբռնել ու ստեղծել: Ալվադովսկին այդ հազվագյուտ ստեղծագործողներեն էր»:

¹ «Շանթ», 1912, էջ 345:

Հայկական ծովանկարչությունը հայրենի բնության պատկերներով հարստացնելու գործում խոշոր ծառայություն է մատուցել Գևորգ Բաշինջաղյանը (1857—1925): Շարունակելով Ալվադովսկու սկսած գործը Բաշինջաղյանը անցյալ դարի վերջին քառորդում նկարում է Սևանա լճի, Կասպից և Սև ծովերի բազմաթիվ պատկերներ, գետափնյա ու լճափնյա տեսարաններ, ինչպես օրինակ «Սև-վանա լիճը և կղզին» (1884), «Իոր գետը», «Սևանա լիճը» (1896), «Անձրեային օր Սևանում» (1898), «Կասպից ծովի տեսարան», «Սև ծովի Կովկասյան ափերը», «Սև ծովը» (1912), «Ծովի տեսարան» (1919), «Գլուխ-գլուխ լիճը», «Բաթումի ծովափը զիշերով» պատկերները: Զրի շարժման, թափանցկության, ծովի խաղաղ պահերի և արտացոլումների վերարտադրման մեջ, ինչպես նաև ծովային բնության գեղեցկությունների բացահայտման խնդիրների լուծումներում նկատվում են Ալվադովսկու բարերար ազդեցությունը:

Գ. Բաշինջաղյանը Ալվադովսկու ծովանկարներով հափշտակվել է գեղես պատանի հասակում: Նա թիֆլիսում 1870-ական թվականների կեսերին առաջին անգամ տեսնելով Ալվադովսկու նկարները, իր ինքնակենսագրականի մեջ գրում է. «Ինձ վրա առաջին ուժեղ էսթետիկական տպավորություն թողնում են Ալվադովսկու երկու պատկերները «Պետերբուրգի տեսարանը» և «Գունիբը», որոնք զբաղեցրել են Կովկասյան թանգարանում»: Հետագայում Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում ուսանելիս նա հաճախ է այցելել մեծ ծովանկարչին և ներկա եղել նրա աշխատանքի ժամերին: «1882 թվականն էր, որ դիմեցի նրան Պետերբուրգում իբրև ակադեմիայի ուսանող,—գրում է Բաշինջաղյանը Ալվադովսկու մասին հրապարակած իր հոգվածներից մեկում,—և նա ինձ բարի խորհուրդներ տալուց հետո առաջարկեց մի-մի անգամ այցելել նրան, որպեսզի ներկա լինեմ աշխատության միջոցին»: Գ. Բաշինջաղյանը այցելել է նրան, ցույց տվել իր գործերը և Ալվադովսկին, ինչպես գրում է Բաշինջաղյանը, «խորհուրդներ էր տալիս, երեսին էր ասում լավն ու վատը, չէր ծածկում իր կարծիքը, թեև գիտեր, որ սիրտ պետք է ցավացնի, բայց գովաբանում էր, երբ հարկավոր էր համարում»¹:

Գ. Բաշինջաղյանը մեծ ծովանկարչի մասին գրել է ավելի քան հինգ հոդված և տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել ու

¹ «Մշակ», 1900, №97:

վկայակոչել է նրան, միշտ և ամենուր բարձր գնահատելով նրա արվեստն ու նշանակությունը: Իր հոգովածներից մեկում նա գրում է. «Հայոց ազգը ընդունակ եղավ ծնելու XIX դարում երկու խոշոր մարդ, երկու հանճար՝ Հովհաննես Այվազովսկի և Պետրոս Ադամյան: Անհրեքելի է, որ հայերի մեջ միշտ գոյություն ունեցել են տաղանդներ տարբեր տեսակի ու մեծության, որոնց գրչի, վրձինի կամ բեմական արվեստի շնորհիվ ընդհանուր ուշադրություն են գրավել... Սակայն այդ երկու հսկաները այնպիսի մի տարօրինակ երևույթ առաջացրին, որ ոչ թե միայն իրենց ազգին փառք ու պարծանք եղան, այլև կարող էին ամեն մի լուսավոր ազգին պատիվ բերել»: Նմանեցնելով նրան մի լուսատուի հետ, Բաշինջադյանը գրում է, որ Այվազովսկիով «հավիտյան պետք է հպարտանա ամեն մի հայ»:

Հայկական ծովանկարչության լավագույն ստեղծագործություններից է Փանոս Թերլեմեզյանի (1868—1938) «Սիփան սարը Կաուց կղզուց» պատկերը, որը ներկայացնում է վանա լիճը շրջապատի սարերի տեսարանով: Նրա «Ծովափը» (1807), «Բրետանի ափերը» (1908), «Բոսֆորի ծովափին» (1911), «Իլմիրի ծովածոցը», «Ոսկեղջուրի ափերին» (1912), «Սև ծովը փոթորկից հետո» (1916), «Սևան» (1917), «Բաթումի ծովեզերքին» (1916) և վերջապես «Լամանշի ափերը» և «Իշխանաց կղզիների ափերը» պատկերները նոր թեմաներով ու մոտիվներով հարստացնում և ընդլայնում են ծովանկարչության ժանրը նախասովետական շրջանում:

1900-ական թվականներին ծովային բնության նոր պատկերներ են ստեղծում ծովանկարիչներ Արսեն Շաբանյանը, Կարապետ Ադամյանը, բնանկարի մեծ վարպետ Ե. Թադևոսյանը, Վ. Սուրենյանցը, Դ. Օբրոյանը և շատ ուրիշներ: Նրանք, համարյա բոլորն էլ, անձամբ ծանոթ են եղել Այվազովսկու հետ, զրուցել ու խորհրդակցել են ծովանկարչության հարցերի շուրջը և սովորել նրա բարձրարվեստ ստեղծագործություններից:

Նրանցից, օրինակ, Վ. Սուրենյանցը (1860—1921) Այվազովսկու հետ առաջին անգամ ծանոթանում է 10 տարեկան հասակում՝ 1870-ական թվականներին և նրա ընտանիքի հետ ճանապարհորդում դեպի Ղրիմի Բախչիսարայ քաղաքը: Այստեղ պատանու կատարած մատիտանկարներն այնքան լավ տպավորություն են թողնում նկարչի վրա, որ Թեոդոսիա վերադառնալուց հետո Այվազովսկին նրան նվիրում է ջրաներկերի մի արկղիկ: Հետագայում Վ. Սու-

քինյանցը մի շարք անգամ հանդիպում և զրուցում է մեծ նկարչի հետ, իսկ 1899 թ. նրան է նվիրում Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի շքեղ հրատարակությունն իր նկարազարդումներով: Նա կերտում է նաև Ալվազովսկու դիմաքանդակը:

Այդ մտերմական հարաբերությունների և զրույցների ընթացքում Հովհ. Ալվազովսկին առաջ է քաշում աշխարհով մեկ ցրված հայ նկարիչներին համախմբելու և նրանց գործունեությունը մեկ միության մեջ ծավալելու հարցը: Այդ մասին է վկայում Վ. Սուրենյանցը: 1916 թվականին՝ «Հայ արվեստագետների Միության» հիմնադիր ժողովում կարգացած իր զեկուցման մեջ առաջարկելով համախմբել տարբեր երկրների ցրված հայ նկարիչներին ու քանդակագործներին Վ. Սուրենյանցն ասում է, որ այդպիսի առաջարկ «ես անձամբ հանգուցյալ Հովհաննես Ալվազովսկուց ևս լսել եմ»¹:

Հայ ժողովրդի մեծ զավակի սրտացավ վերաբերմունքը ազգային նկարչության ու նրա երիտասարդ ստեղծագործողների նկատմամբ, նրանց հետ ունեցած սերտ, մշտական կապերն ու բարեկամական հարաբերությունները ուղղակի նպաստում են հայ նոր նկարչության սկզբնավորմանն ու արագ զարգացմանը XIX դարում:

Նշանակալից են Հովհ. Ալվազովսկու բարերար ազդեցությունը և նրա նշանակությունը հայ մշակույթի մյուս բնագավառներում ևս, մասնավորապես երաժշտության և զեղարվեստական գրականության մեջ:

Լինելով երաժշտասեր և ջութակի վրա նվագող, Ալվազովսկին հաճախ է երգել ու նվագել Ղրիմի ժողովրդական երգեր, որոնցից մի քանիսը ձայնագրել և օգտագործել է ռուս կոմպոզիտոր Մ. Գլինկան իր «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում: «Ես հաճախ ջութակի վրա նվագում էի Գլինկայի համար երգեր, որոնք ես լսել էի Ղրիմում, մանկության տարիներին, իսկ նա այդ երգերը հետագայում գրեց իր «Ռուսլան և Լյուդմիլայի» մեջ,—վկայում է Ալվազովսկին և ավելացնում,— մի անգամ, երբ ես նկարում էի ոչ մեծ ծովային մի տեսարան, Գլինկան նստեց դաշնամուրի առաջ և հրապուրված տեսարան, Գլինկան նստեց դաշնամուրի առաջ և andante-ն «Ռուսլանից»: Դրանվագեց դրանք, արևելյան պարեր և andante-ն «Ռուսլանից»: Դրանից հետո նա զգացմունքով և հմտությամբ երգեց Անտոնիդայի «Не о том скорблю, подружники» ռոմանսը: Ես առաջին անգամ

¹ Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Վ. Սուրենյանցի ֆոնդ, № 14:

էի նրան լսում և նա ինձ իր երգով միանգամայն հիացրեց»։ Այդ կարևոր փաստի մասին խոստովանում է և ինքը՝ Գլինկան, նշելով, որ Այվազովսկու երգերից «երկուսը ես օգտագործեցի լեզգինկայի, իսկ երրորդը՝ Ռատմիրի andante-ի համար. «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայի երրորդ գործողության մեջ»¹։ Թերևս դրա հիման վրա է Ա. Չեխովը 1888 թ. գրել, թե Հովհաննես Այվազովսկին «Գլինկայի հետ գրել է «Ռուսլան և Լյուդմիլան»²։

Հովհ. Այվազովսկին մշտական շփման մեջ է եղել նաև հայ երաժիշտների ու երգահանների հետ, ամեն կերպ խրախուսել է նրանց։ Առանձնապես մոտ է եղել նա Սպենդիարյանների ընտանիքին, մասնավորապես երիտասարդ կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի հետ։ Վերջինս՝ նույնպես Ղրիմից (Սուգակից), բաղմիցս եղել է Այվազովսկու տանը, և նրանք միասին նվագել ու երգել են։ Այդ մասին քաղցրությամբ է հիշում կոմպոզիտորը։ Նկարիչը մոտիկից ճանաչել ու խրախուսել է նաև երիտասարդ ջութակահար Հովհ. Նալբանդյանին։ 1898 թ. մարտի 10-ին Պետերբուրգում տեղի ունեցած երկու հայ երիտասարդների՝ Ալ. Սպենդիարյանի ու Հովհ. Նալբանդյանի համերգին ներկա գտնվելով, ծերունի նկարիչը հիանում է նրանց նվագով, մոտենում է ջութակահար Նալբանդյանին և բոլորի ներկայությամբ գրկում, համբուրում է նրան և բացականչում. «Ուլիմ մանուկ՝ հանճարեղ Հովհաննես, այսօր դու ինձ դուժեցիր, ի՞նչով կամ ի՞նչպես հայտնեմ քեզ այսօրվա իմ ստացած հոգեկան բավականությունը»³։ Մեծանուն նկարչի այդօրինակ ջերմ, սրտառուչ վերաբերմունքը հայ երիտասարդների նկատմամբ ուժեղ տպավորություն է գործում հասարակության վրա, նպաստելով ազգային մշակույթի երիտասարդ տաղանդավոր գործիչների լայն ճանաչմանը ուս հասարակության կողմից։

Բարերար է եղել Այվազովսկու ազդեցությունը Ղրիմցի երաժիշտ ու նկարիչ Անդրեաս Քաղցածյանի վրա։ Ղրիմի պատերազմի ժամանակ նա գրում է «Զու ի Սինոպ» հաղթական քայլերգը, որը շատ է դուր գալիս Սինոպի ճակատամարտի հերոս ծովակալ Նախիմովին, որը և պարգևատրում է նրան։ Ա. Քաղցածյանին ճանա-

¹ М. И. Глинка. Литературное наследие, 1952, стр. 180.

² А. П. Чехов, Полное собр. соч. и писем. т. XIV, Письма. 1949, стр. 137.

³ «Մշակ», 1898, № 44:



Ինքնանկար, 1887, գրչանկար

շելլու գործում պակաս չի եղել Ալվադովսկու դերը, որն այդ ժամանակ նկարում էր «Սինոպի ճակատամարտը» հանրահայտ պատկերը:

Իր կյանքի և երկարատև գործունեության ընթացքում Հովհ. Ալվադովսկին մշտական շփման մեջ է եղել հայ, ռուս և արևմտանվորպական երկրների մշակույթի շատ գործիչների՝ այդ թվում՝ գրողների հետ: Դեռևս Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում ուսանելու տարիներին երիտասարդ Հովհաննեսը մի քանի անգամ հանդիպել և զրուցել է ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի հետ: «Պուշկինը խիստ փաղաքշորեն դիմավորեց ինձ, — գրում է նկարիչը, 1896 թ. վերհիշելով իր առաջին հանդիպումը բանաստեղծի հետ, — հարցրեց թե որտեղ են իմ նկարները: Ես դրանք ցույց տվեցի Պուշկինին... Իմանալով, որ ես բնիկ ղրիմցի եմ, մեծ բանաստեղծը հարցրեց, ո՞ր քաղաքից, և եթե այդքան վաղուց է, որ այստեղ եմ, ապա չե՞մ կարոտել հայրենիքիս և հյուսիսում չե՞մ հիվանդանում...»: Քաղցրությամբ հիշելով «ռուսական պոեզիայի արևի» կողմից երիտասարդ հասակում «սիրալիր կերպով ընդունվելն ու

փաղաքշվելը», Այվաղդուսկին հետագայում նկարում է նրա անմահ կերպարն արտացոլող շուրջ 10 պատկեր, որոնցից մեկը՝ «Պուշկինի հրաժեշտը ծովին», նա նկարում է Ի. Ռեպինի հետ (1887):

Հովհաննես Այվաղդուսկին մտերիմ հարաբերություններ է ունեցել առակագիր Կոխլովի, բանաստեղծ ժուկովսկու, Ն. Գոգոլի, բրննադատ Վ. Բելինսկու, հետագայում՝ Նադսոնի և շատ ուրիշների հետ: Նկարիչը գրում է, որ Բելինսկին «խմբակային տաք զրույցների ժամանակ վեհ ու սքանչելի մտքեր էր ներշնչում ինձ», իսկ «Գոգոլի հետ, լույս տեսնելուց հետո, կարդում էի Բելինսկու «Գրական Երազանքներ» լուրջ և անկեղծ հոգվածք»:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հովհ. Այվաղդուսկու և հայ գրողների կապերը, որոնք նույնպես իր ժամանակին անձնական ու ստեղծագործական բնույթ են ունեցել: Մեր գրողներն ու բանասերները ոգևորվել են նրա բարձրարվեստ ծովանկարներով, բարձր են գնահատել հայ ժողովրդին մատուցած նրա ծառայությունները, նվիրել են նրան ու նրա հիշատակին բանաստեղծություններ, հոգվածներ, արձակ էջեր, ուսումնասիրություններ և նրա ծովանկարների աղղեցություն տակ գրել են ծովի երգեր:

Հայ գրողների և մշակույթի աշխարհի գործիչների հետ Այվաղդուսկու ծանոթությունն ու մտերմական կապերն սկսվում են վաղ ժամանակներից: Դեռևս 1840-ական թվականների կեսերին բանահավաք Գ. Ախվերդյանը իր «Օրագրում» նշում է Այվաղդուսկու հետ հանդիպելու և նրա ծովանկարները տեսնելու մասին, իսկ 1846 թ. Մկրտիչ էմինին գրած նամակում նա Պետերբուրգից տեղեկացնում է «Այվաղդուսկին այստեղ է: Ես ծանոթացա նրա հետ, մոտ օրերս ցուցահանդեսում ես տեսա նրանից վեց նկար: Մի ազատ ժամանակ ես հաշվետվություն կտամ քեզ Այվաղդուսկու մասին, թե ինչպիսի ուժեղ տպավորություն է գործել վրաս այդ մեծ նկարիչը»:

Հովհ. Այվաղդուսկու նկատմամբ եղած այս հետաքրքրությունը, միաժամանակ, ասում է այն մասին, որ 1840-ական թվականներին արդեն նկարիչը լայն ճանաչում ուներ ոչ միայն ուս, այլև հայ հասարակության մեջ: Նրա մասին հայկական պարբերական մամուլը սկսել էր գրել դեռևս 1840-ական թվականներից: Այդ ժամանակից էլ սկսած նկարիչը անմիջական մասնակցություն է ունեցել հայ հասարակական ու մշակութային կյանքին:

1850—60-ական թվականներին հայ հասարակության մեջ Այվազովսկու ունեցած լայն ճանաչման մասին է վկայում այն փաստը, որ նրա թեկնածությունն առաջ է քաշվել Նոր Նախիջևանի հայկական դպրոցների պետքերի համար՝ Մասեհ Բաբաջանյանի կտակած խոշոր գումարը Հնդկաստանից բերելու հարցը քննելու ժամանակ։ Հովհ. Այվազովսկին ուզում էր ոչ միայն բերել այդ գումարը հայկական նոր ու աշխարհիկ դպրոց հիմնելու, այլև Հնդկական օվկիանոսը տեսնելու համար։ Թեև այդ հարցը լուծվում է հօգուտ Մ. Նալբանդյանի, այնուամենայնիվ, Այվազովսկու թեկնածության առաջ քաշումը ինքնին վկայում է ազգային գործերի հետ մեր նկարչի ունեցած սերտ, օրգանական կապերի մասին։

1862 թ. Հովհ. Այվազովսկու հետ հետաքրքրական հանդիպում է ունեցել Ղ. Աղայանը, որ նա համարում է իր կյանքում պատահած գլխավոր դեպքերից մեկը։ Հետագայում գրած «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» մեմուարական գրքում վերհիշելով նկարչի հետ ունեցած հանդիպումը Թեոդոսիայում, Աղայանը գրում է. «Այստեղ առաջին անգամ տեսա ես հանճարավոր Այվազովսկուն։ Շատ դուր եկավ ինձ նա իր վայելչակազմ հասակով և համակրելի դեմքով»։ Համեմատելով նկարչին նրա եղբոր՝ հոգևոր գործիչ Գաբրիել Այվազյանի հետ, Աղայանը գրում է. «Երկու Այվազովսկիները ջոկ-ջոկ աստղերի տակ են ծնվել։ Աշխարհային փառքը մեկի հետևից է վազում, մյուսի առջևից։ Նկարիչը չի կարող փառքի ճանկերից ազատվել, որքան էլ փախչի նրանից, իսկ նրա եղբայրը իզուր էր շարշարվում փառքի հետևից հասնելու»¹։

1874 թ. Հ. Պարոնյանը գրում է «Հովհաննես Այվազովսքի» վերնագրով մի հոդված, որի մեջ բարձր է գնահատում նկարչի ուսուցիտական արվեստը։ «Բնությունը, որ առաջին զաղտնապահ մ է, չէ կրցեր խեղճը բան մը պահել Այվազովսքիեն, սա չուր վրձինը առած բնության խորն է թափանցեր և անոր բոլոր զաղտնիքներուն տեղեկանալով՝ զանոնք ի տես հաներ է,—գրում է Հ. Պարոնյանը և ավելացնում,—բնությունն ալ ունի հիմա իր հայելին։ Այվազովսքիին նկարներուն նայելուն պես կրնա անոր մեջը տեսնել իր պատկերը»։ Այդ հոդվածում ծաղրի ենթարկելով Կ. Պոլսում հրատարակվող «Կուրիեր դը Օրիան» թերթը, որը շարամտորեն գրել է թե Այվա-

¹ Ղ. Աղայան, Երկեր, հատ. 3, 1940, էջ 43։

ղովակին հայ չէ, չ. Պարոնյանը իրեն հատուկ սրամտությամբ ու հպարտությամբ պատասխանում է, որ այդ տեսակ «լուրերուն վրա խնդալով կըզվարճանանք և կիմացունենք իրենց, որ Հովհաննես Այվազովսքին հայ է և հայոց փառքն է»¹:

Արևմտահայ գրողներից Այվազովսկու և նրա ստեղծագործությունների մասին ժամանակին արտահայտվել է նաև երիտասարդ բանաստեղծ Վահան Մալեկյանը, որը 1888 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած ցուցահանդեսի մասին գրած հոդվածում հիացմունքով է արտահայտվում «ընդ ճարտար հայոց հանճարին», անվանելով Այվազովսկուն «Դուցազն հայկական նկարչության»: Այդ նույն ցուցահանդեսի կապակցությամբ Ա. Արփիարյանը Կ. Պոլսից «Մշակին» գրում է. «Գեղարվեստական կյանքերնիս Այվազովսկին նկարահանդեսն էր, որ արդեն փակվեցավ: Ռուսական դեսպանատան պալատին մեջ բացված այդ հանդեսը ազգայնությամբ մը գույն ունեցավ և գլխավորապես հայերն էին, որ կը դիմեին անդ: Այդ պատկերներեն հինգ հատ նվեր տված է Պոլսո ազգային բարեգործական հիմնարկության»³:

Հովհ. Այվազովսկին անձամբ ծանոթ է մտերմական կապերի մեջ էր արևմտահայ հասարակական և մշակույթի շատ այլ գործիչների հետ, այդ թվում «Արևելյան մամուլ» ամսագրի խմբագիր Մ. Մամուրյանի, առաջնակարգ լուսանկարիչ, թարգմանիչ և բանասեր Գևորգ Ապտուլայի, հայտնի ճարտարապետ Սարգիս Պալյանի, պետական գործիչ Հ. Տատյանի և ուրիշների հետ, որոնցից շատերին գրած հայերեն նամակները պահպանվել են մինչև մեր օրերը:

Մեծ նկարչի հետ շատ մտերիմ է եղել Պ. Աղամյանը: 1883 թ. Մոսկվայում հարուստ Անանյանների (Անանով) տանը ծանոթանալով նրա հետ Աղամյանն իր նամակներից մեկում գրում է. «Անցյալ կիրակի այնտեղ հանդիպեցա Այվազովսկուն՝ երևելի նկարչին, որ ինձ ուղել էր տեսնել: Չորս վայրկյանի մեջ մի ծովային տեսարան ուրվագծեց գրչով և ինձ նվիրեց: Կարող եք երևակայել, թե ոքքան ուրախացա: Հետո ուղեց որ մի բան արտասանեմ. արտասանեցի «Գործադու դարբնյաց»՝ իբրև ի փոխարինություն յուր թանկագին ուրվագծին»³:

¹ «Թատրոն», 1874, № 66:

² «Մշակ», 1888, № 132:

³ Պ. Աղամյան, նամակներ, 1959, էջ 48:

1900 Apr. 17. Rye

St. George's Church
Warrington.

[Illegible handwritten text]

Հովհ. Այվազովսկու ձեռագիրը. 1900

Այդ ծանոթությունից հետո նրանց հանդիպումները հետագայում ևս կրկնվում են և դառնում այնքան մտերմական, որ Այվազովսկին միշտ իր մոտ է հյուրընկալում արտիստին, իսկ Ադամյանը նկարում է Այվազովսկու դիմանկարը և նվիրում նրան: Նա 1885 թ. գրում է մի ընդարձակ բանաստեղծություն՝ «Առ Այվազովսքի» վերնագրով, որի մեջ, մեծարելով հանճարեղ նկարչին, գրում է.

...Ինչպես որ կնոջ դեղանի
Հարկավոր է մի հայելի,
Որ յուր ձեռքերն անմահ
Մեջը տեսնե ու զմայլի,
Նույնպես բնությունն ուզեց գտնել
Իրեն արժան շքեղ հայելի.
Ու քո հանճարն գտավ առավ,
Քո ներկապնակ ճոխ, լեզվանի...

Նկարչի ժամանակակից հայ գրողներից Այվազովսկուն երկու բանաստեղծություն է նվիրել Հովհ. Թումանյանը: 1893 թ. «Մուրճ» ամսագրում տպագրված «Այվազովսկու նկարի առաջ» բանաստեղծության մեջ Թումանյանը չափազանց սեղմ, բայց խոր կերպով տալիս է իսկական ծովը հանճարեղ կերպով պատկերող նկարչի կերպարը.

Ելած օվկիանի անդուսպ ալիքներ,
Ծանր հորձանքով զարկվելով դեպ վեր,
Լեռնանում էին, դառնալով ահեղ,
Եվ մրրիկն ուժգին շնչում էր այնտեղ.
Անեղը ու անվերջ
Տարածության մեջ:
«Կանգնեցե՛ք» գոչեց վրձինը ձեռքին
Կախարդ ծերունին հուզված տարերքին,
Եվ լուռ, հնազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կտավի վրա
Կանգնած են ահա¹:

¹ Հ. Թումանյան, Երկեր. հատ. I, 1950, էջ 107:

Երկրորդ բանաստեղծութեան մեջ, որը հայտնի է «Հ. Այվա-
զովսկու «Սև ծովի ափերը» նկարի առջև» կամ «Մի հառաչանք»
վերնագրով, Թումանյանը հայտնում է այն միտքը, որ տեսնելով
Այվազովսկու ստեղծագործութուններում ծովափնյա ժայռերի
պատկերներ, ինքը վերհիշում է իր հայրենի երկիրը՝ «Ժայռերը իմ
հայրենիքի», և իր անցած կյանքի գեղեցիկ վայրերը...

Ես տեսա հսկա
Տաղանդի մի գործ՝
Անհաշտ Պոնտոսի
Ափերն ալեկոծ.
Տեսա, հիացա,
Եվ սիրտս բացվեց,
Եվ նրա միջից,
Որպես վանդակից
Արծիվը գերի,
Մի կարոտալի
Հառաչանք թռավ,
Ծուխ դարձավ կորավ
Դեպի ժայռերը
Իմ հայրենիքի,
Դեպի վայրերը
Իմ անցած կյանքի :

Հովհ. Այվազովսկուն և նրա ստեղծագործութուններին անձնա-
պես ծանոթ է եղել Ալ. Մատուրյանը, որը գրել ու արտահայտվել է
նրա մասին մի քանի անգամ: 1898 թ. Մոսկվայում տեսնելով Այ-
վազովսկու ծովանկարների ցուցահանդեսը, Ալ. Մատուրյանը գրում
է «Ծովի բանաստեղծը» վերնագրով մի ընդարձակ հոդված, որի մեջ
նկարագրելով նրա ծովանկարները, ավելացնում է, որ «Այվազով-
սկին գեղարվեստական աշխարհի հսկաներից մեկն է... Այդ ստեղ-
ծագործութունները պետք է աչքով տեսնել, պետք է ժամերով
կանգնել ու նայել նրանց՝ զգալու համար, թե որքա՜ն ուժ և ուրա-
խություն կա նրանց մեջ»¹:

¹ «Փորձ», 1898, № 4:


1900 թ. «Մշակ» թերթում հրապարակած «Մովի կախարդը» ասրձակ բանաստեղծության մեջ Այվադովսկու մահվան կապակցությամբ Ալ. Մատուրյանը գրում է, որ «հանճարեղ հայազգի նկարիչ» Հովհ. Այվադովսկու մահը ողբում են ոչ միայն նրա հայրենակիցները, համայն մարդկությունը, այլև նույնիսկ ծովը, որն այնպես զեղեցիկ կերպով պատկերել է նա իր կտավներում: Նա գրում է, որ «Այվադովսկիները չեն մեռնում: Նրանք իբրև հանճարեղության ներկայացուցիչներ, որոնց բնությունն է կոչում մեկնելու մարդկության իր անթափանցելի գաղտնիքներն, ինչ ասպարեզի վրա էլ որ լինեն, ապրում են հավերժ, որովհետև ծառայում են հավերժին, հոգով ձուլվում են հավերժության հետ»: Հայ ժողովրդին ու նրա զեղարվեստական մշակույթին մեծ ծովանկարչի մատուցած ծառայություններից մեկն էլ բանաստեղծը համարում է այն, որ Այվադովսկին իր բազմաթիվ, բարձրարվեստ ծովանկարներով «Մեր առաջ բացեց, մեր սրտին մատչելի դարձրեց այդ մեծ, այդ բարդ ու անքննին կյանքի բոլոր ծալքերը, բոլոր ելևէջները»¹: Հովհ. Այվադովսկու ծովանկարների ազդեցության տակ Ալ. Մատուրյանը գրում է «Ալեկոծ ծովին» բանաստեղծությունը և այն հրատարակում «Գեղարվեստական ալբոմ Ն. Կ. Այվադովսկու հիշատակին» ժողովածուում (1903):

Հովհ. Այվադովսկու մասին գրել ու արտահայտվել են նաև Ալ. Շիրվանզադեն, Լեոն, նկարիչ և գրող Գ. Բաշինջաղյանը, գրականագետ Եր. Շահազիզը, ժողովրդական արտիստ Ա. Արմենյանը և շատ ուրիշներ, որոնք ունեցել են անձնական ծանոթություն և հանդիպումներ հայազգի մեծ նկարչի հետ:

Այվադովսկու և հայ գրողների միջև XIX դարում եղած սերտ, մտերմական-բարեկամական կապերը միաժամանակ նպաստեցին ծովային երգերի արագ ու լայն տարածմանը և զարգացմանը հայ ազգային բանաստեղծության մեջ: Այդ են հաստատում ոչ միայն Պ. Ադամյանի, Հովհ. Թումանյանի և Ալ. Մատուրյանի վերոհիշյալ բանաստեղծությունները, այլև Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, Բաֆֆու, Մ. Մեծարենցի և ժամանակակից մյուս գրողների ծովային երգերը:

Հովհաննես Այվադովսկին ապրեց 83 տարի: 1848 թ. Պետեր-

¹ «Մշակ», 1900, № 79:



Հ. Կ. Մ. Այվազովսկու զերեկմանը խեղդութալով

բուրգում նա ամուսնացավ անգլուհի (լութերադավան) Յուլիա Գրեյսի հետ և նրանից ունեցավ 4 աղջիկ, որոնք բուլոբն էլ, մոր դրդամբ, ամուսնացան օտարազգիների հետ: Դժգոհ իր այդ կնոջից Ալվադովսկին հետագայում, էջմիածնի սինոդի որոշմամբ, մեծ դժվարությամբ բաժանվում է նրանից և 1882 թվականին՝ 65 տարեկան հասակում ամուսնանում է երիտասարդ այրիացած Աննա Բուռնազյանի հետ և ապրում 18 երջանիկ տարիներ: Նա մեռավ 1900 թ. ապրիլի 19-ին (նոր տոմարով մայիսի 2-ին), իր տանը՝ բազմոցում նստած ժամանակ, հանկարծ, արյան կաթվածից: Նրա մահվան լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ աշխարհում և բուլոբ ժողովուրդները սգացին այդ կորուստը: Նա թաղվեց մեծ շուքով, Թեոդոսիա քաղաքի հայոց ս. Գևորգ եկեղեցու բակում: Նկարչի գերեզմանի մոտ գտնվող ցանկապատին փակցված է մարմարե մի հուշատախտակ, որի վրա հայերեն գրված է. «Աստ հանգչի մարմին պրոֆեսոր Յովհաննու Կոնստանդինեան Ալվադովսկի, 1817—1900»: Նրա գերեզմանի վրա գրված է սպիտակ մարմարից մեծ տապանաքար, որի մի կողմի վրա գրված է. «Յովհաննէս Կոստանդինեան Ալվադովսկի ծնեալ յամի տն 1817-ի յուլիս ամսոյ փոխեցաւ առ տէր յամի 1900-ի 19 ապրիլի», մյուս կողմի վրա՝ «Профессор Иван Константинович Айвазовский, 1817—1900» և դարձյալ հայերեն՝ «Մահկանացու ծնեալ անմահ զյուրն յիշատակ է թող»:

Այո, Հովհաննէս Ալվադովսկին ծնվեց մահկանացու, բայց իր հանճարեղ ստեղծագործութիւններով իր մասին անմահ հիշատակ թողեց:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Հովհ. Այվազովսկու դիմանկարը
Նկարչի մոր՝ Հռիփսիմեի դիմանկարը. 1849
Նկարչի հոր՝ Կոնստանդնի դիմանկարը
Թեոդոսիա. 1865
Առաքատանավ. 1845 (սեպիա)
Խենեքորդ ալիք. 1850
Ձկնորսները ծովափին. 1852
Գրչանկար
Փոթորիկ ծովափի մոտ. 1850
Փոթորիկ Այա հրվանդանի մոտ. 1875
Արարատ. 1868
Արարատ լեռան հովիտը. 1882
Արարատ. 1887
Նայր իջնում է Արարատից. 1887
Թիֆլիս. 1868
Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թ.
Կովկասի կանանց փախցնող թուրքական նավի դրավումը ուս նավաստիների կողմից. 1888
Բայրոնի այցը Մխիթարյաններին ս. Ղազար կղզում
Հովհ. Այվազովսկին արվեստանոցում (լուսանկար)
Ինքնանկար, գրչանկար. 1887
Հովհ. Այվազովսկու ձեռագիրը. 1900
Հովհ. Այվազովսկու գերեզմանը Թեոդոսիայում



ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ
 МИНАС САРКИСОВИЧ САРГСЯН
 Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Յ Վ Ա Ջ Ո Վ Ս Կ Ի

Հրատ. խմբագիր Ա. Հ. Շ ա դ գ ա մ յ ա ճ
 Կազմը՝ Լ. Ա. Ս ա դ ո յ ա ճ Ի
 Տեխ. խմբագիր Մ. Ա. Կ ա փ լ ա ճ յ ա ճ

ՎՖ 04459 հրատ. № 2909, պատվեր 620, տպաքանակ 5000

Հանձնված է արտագրության 22/VIII 1967 թ., ստորագրված է տպագրու-
 թյան 4/IX 1967 թ., տպագրական 4 մամուլ, հրատարակչական 3,12
 մամուլ, թուղթ № 1,60×90¹/₁₆ Գինը 22 կ.

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի էջմիածնի տպարան:

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041322

A II
41322